

ԲՈՒՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ՎԱՐԿԱՆԻՋԱՎՈՐՄԱՆ ԸՄՏԱԿԱՐԳ



ՀՀ բույսերի ազգային վարկանիշավորման շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Հասցե՝ Ս. Վրացյանի 73, ք. Երևան, ՀՀ

Հեռ.՝ 578-453, 578-455

Երևան 2016

Բովանդակություն

Ներածություն.....	3
Ուսանողների շրջանում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն.....	5
Դասախոսների շրջանում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն.....	34
Գործատուների շրջանում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն.....	61
Ամփոփում.....	74
Հավելված 1.....	79
Հավելված 2.....	88

Ներածություն

Բուհերի վարկանիշավորման ազգային համակարգի շրջանակներում իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն ՀՀ պետական, ոչ պետական և պետական մասնակցությամբ բուհերի ուսանողների և դասախոսների, ինչպես նաև գործատուների շրջանում: Հետազոտության նպատակն է եղել գնահատել բուհերի ներկա վիճակը, բացահայտել առկա խնդիրները և դրանց լուծման հնարավորությունները: Հետազոտությունն իրականացվել է քանակական մեթոդաբանությամբ, որը հնարավորություն է տալիս ստանալ ձևայնացված, թվային տվյալներ և դուրս բերել ընդհանուր համակարգային օրինաչափություններ: Տվյալների հավաքման մեթոդ է հանդիսացել ստանդարտացված հարցազրույցի մեթոդն՝ ըստ նախապես մշակված հարցաթերթերի: Հետազոտության ընտրանքը կազմվել է ըստ մի քանի չափանիշների՝ ուսանողների դեպքում՝ ըստ կուրսի, դասախոսների դեպքում՝ ըստ գիտական աստիճանի: Ընտրանքի սահմանային սխալի գործակիցը կազմել է $\pm 3.8\%$ ՝ տվյալների 95% ճշտությամբ: Գործատուների դեպքում իրականացվել է նպատակաուղղված տիպային ընտրանք՝ սահմանելով գլխավոր համախմբության հիմնական միտումները:

ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտությանը մասնակցել է 63 բուհ, որից 49%-ը պետական բուհերն են, 44%-ը՝ ոչ պետական և 6%-ը՝ ՀՀ-ում գործող պետական մասնակցությամբ բուհերը: Մարզային բուհերը կազմել են ամբողջի 37%-ը, իսկ մասնաճյուղերը՝ 22%-ը: Բուհերի աշխարհագրական բաշխվածությունը կարելի է տեսնել ստորև բերված աղյուսակում:

Բուհերի աշխարհագրական բաշխումը

Մարզ	Քաղաք	Բուհերի քանակ	%
<i>Երևան</i>	Երևան	40	63
<i>Արմավիրի մարզ</i>	Էջմիածին	1	2
<i>Գեղարքունիքի մարզ</i>	Գավառ	2	3
	Վարդենիս		
<i>Կոտայքի մարզ</i>	Հրազդան	1	2
<i>Լոռու մարզ</i>	Վանաձոր	4	6
<i>Շիրակի մարզ</i>	Գյումրի	7	11
<i>Սյունիքի մարզ</i>	Սիսիան	4	6
	Գորիս		
	Կապան		
<i>Տավուշի մարզ</i>	Դիլիջան	2	3
	Իջևան		
<i>Վայոց Ձորի մարզ</i>	Եղեգնաձոր	1	2
<i>ԼՂՀ</i>	Ստեփանակերտ	1	2
Ընդամենը		63	100

Ուսանողների շրջանում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն

ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման շրջանակներում իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն բուհերի ուսանողների շրջանում՝ պարզելու համար վերջիններիս կողմից բուհի տված կրթությունից բավարարվածությունը: Հետազոտությանը մասնակցել է 1035 ուսանող: Ուսանողների միջին տարիքը 21 է, նվազագույնը՝ 17, առավելագույնը՝ 50: Ուսանողների բաշխումն՝ ըստ բնակության վայրի, ունի հետևյալ պատկերը՝

Աղյուսակ 1. Ուսանողների բաշխումն՝ ըստ բնակության վայրի:

<i>Բնակության վայր</i>	<i>Տոկոս</i>
<i>Երևան</i>	52.4%
<i>Արագածոտնի մարզ</i>	3.3%
<i>Արարատի մարզ</i>	5.4%
<i>Արմավիրի մարզ</i>	5.5%
<i>Գեղարքունիքի մարզ</i>	4.3%
<i>Լոռու մարզ</i>	4.8%
<i>Կոտայքի մարզ</i>	5.4%
<i>Շիրակի մարզ</i>	9.4%
<i>Սյունիքի մարզ</i>	3%
<i>Վայոց Ձորի մարզ</i>	1.5%
<i>Տավուշի մարզ</i>	2.8%
<i>ԼՂՀ</i>	1.9%
<i>Վրաստան</i>	0.3%
<i>Ընդամենը</i>	100%

Ուսանողների կեսից ավելին՝ 52.4%, Երևանի բնակիչներ են, մնացածները՝ ՀՀ այլ մարզերի, ԼՂՀ-ի և Վրաստանի, ընդ որում՝ մարզերի բնակիչների մեծամասնությունը՝ 81.6%, քաղաքային համայնքներից են, մնացած 18.4%-ը՝ գյուղական համայնքներից: Մարզային քաղաքների թվով գերակշիռ են Գյումրիի, ապա Վանաձորի ուսանողները՝ կազմելով համապատասխանաբար 20.5% և 10.7% կշիռ:

Հետազոտության նպատակից և խնդիրներից ելնելով՝ հետազոտության մեջ ընդգրկվել են առկա ուսուցմամբ բակալավրիատի 3-րդ և 4-րդ, մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողները: Այն բուհերում, որտեղ չի գործել առկա ուսուցում կամ համապատասխան կուրսերը բացակայել են, կատարվել է ընտրանքային միավորների

փոխարինում: Հարկ է նաև նշել, որ մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողները 2011 թվականի դիմորդներն են, երբ դպրոցները շրջանավարտ չունեին՝ կապված 12-ամյա կրթական համակարգի անցման հետ, և դիմորդների ընդհանուր թիվն այդ տարի կազմել է 1209 հոգի: Ըստ այդմ՝ ուսանողների բաշխումն՝ ըստ կուրսերի, կրում է հետևյալ տեսքը՝

Աղյուսակ 2. Ուսանողների բաշխումն՝ ըստ կուրսերի:


<i>Կուրս</i>	<i>Տոկոս</i>
<i>3-րդ կուրս բակալավրիատ</i>	43.6%
<i>4-րդ կուրս բակալավրիատ</i>	35.2%
<i>1-ին կուրս մագիստրատուրա</i>	9.7%
<i>2-րդ կուրս մագիստրատուրա</i>	10.6%
<i>Հեռակա 2-րդ կուրս</i>	0.6%
<i>Հեռակա 3-րդ կուրս</i>	0.2%
<i>Հեռակա 4-րդ կուրս</i>	0.1%
<i>Հեռակա 5-րդ կուրս</i>	0.1%
<i>Ընդամենը</i>	100%

ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման աղյուսակները կազմվել են՝ վերջիններս բաշխելով 6 կլաստերների՝ ըստ բուհերում իրականացվող կրթական ծրագրերի (բակալավրի, մագիստրոսի, հետբուհական) և մասնագիտական ոլորտների թվի (մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթություն իրականացնող բուհեր, երեք և ավել մասնագիտական ոլորտներում կրթություն իրականացնող բուհեր): Արվեստի բուհերը, ելնելով իրենց առանձնահատկություններից, միավորվել են առանձին կլաստերում¹ (յուրաքանչյուր կլաստերի բուհերի ցանկը տե՛ս հավելված 1-ում, ինչպես նաև Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի պաշտոնական կայքում²): Ստորև բերված գծապատկերում ներկայացված է ուսանողների թիվն՝ ըստ բուհերի կլաստերների:

¹ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգ (մեթոդաբանություն, ցուցանիշներ, հաշվարկի մեխանիզմներ), URL: <http://ranking.amedu.am/methodology2015.pdf>

² Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգ, URL: <http://ranking.amedu.am/>


Գծապատկեր 1.



Գծապատկերից երևում է, որ ուսանողների թվով ամենամեծը՝ 31.9%, կազմում է երեք կրթական աստիճաններում և երեք ու ավելի մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի կլաստերը, որն իր մեջ ներառում է Երևանի և մարզային, ինչպես նաև ՀՀ պետական մասնակցությամբ խոշոր բուհերը և դրանց մասնաճյուղերը: Իր մեծությամբ երկրորդ կլաստերը երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհերին է՝ 30.6%, ապա բակալավրական ու մագիստրոսական և երեք ու ավել մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի կլաստերը՝ 17.7%, բակալավրական և մագիստրոսական և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի կլաստերի ուսանողները կազմել են 10.5%, միայն բակալավրական մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի կլաստերինը՝ 2.5%, հարկ է նշել, որ այս կլաստերն ամենափոքրն է թե՛ դրանում ընդգրկված բուհերի թվով, թե՛ բուհերի մեծությամբ, և իհարկե արվեստի բուհերի կլաստերը՝ 6.8% կշռով:

Բուհերի վարկանիշային գնահատման տեսանկյունից հետաքրքիր է, թե ինչով է պայմանավորված ուսանողների կողմից բուհերի ընտրությունը: Տե՛ս գծապատկեր 2.:

Գծապատկեր 2.



Գծապատկերից երևում է, որ բուհի ընտրության գլխավոր պատճառը կապված է բուհի կրթության որակի հետ: Այս չափանիշը՝ որպես բուհի ընտրության նախապայման, գրանցել է 18.3% կշիռ: Բուհի ընտրության մեջ հաջորդ կարևոր գործոնը կապված է մասնագիտության ընտրության հետ: Տվյալ մասնագիտությամբ կադրեր պատրաստող այլընտրանքային բուհի բացակայության չափանիշը կազմել է 14.2% կշիռ: Հարկ է նշել, որ այս նախապայմանը՝ որպես բուհի ընտրության պատճառ, նշում են ինչպես այն ուսանողները, որոնց ընտրած մասնագիտությամբ կադրեր պատրաստող այլընտրանքային բուհ առհասարակ չկա՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, այնպես էլ այն ուսանողները, որոնց կարծիքով համապատասխան մասնագիտությամբ որակյալ կադրեր միայն տվյալ բուհն է պատրաստում, ինչպես Երևանի պետական համալսարանի, Հայաստանի ամերիկյան համալսարանի և մի շարք այլ բուհերի պարագայում: Երկու դեպքում էլ բուհի ընտրությունը հանգեցվում է մասնագիտության ընտրությանը: Հաջորդ երկու պատճառները գրեթե նույն

կշիռներն են գրանցել՝ ծնողների, հարազատների խորհուրդ և բուհի հեղինակություն՝ համապատասխանաբար՝ 11.3% և 11.2%: Բուհի ընտրության մեջ կարևոր գործոն է հանդիսանում նաև ուսման վարձի չափը: Ցածր վարձավճարի չափանիշը գրանցել է բուհի ընտրության պատճառների մեջ 10.6% կշիռ: Տարածքային հասանելիությունը բուհի ընտրության կարևոր նախապայման է հատկապես մարզային բուհերի և մասնաճյուղերի պարագայում: Այս չափանիշում ամենամեծ կշիռն ստացել է Գյումրիի Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը, ապա Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանը: Այլ պատճառների կատեգորիայում խմբավորվել են այնպիսի գործոններ, որոնք առանձին շատ փոքր ցուցանիշներ են գրանցել:


Հետաքրքիր է նաև, որ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների մեծամասնությունը՝ 85.6%, կրթությունը շարունակում է նույն բուհում, իսկ 14.4%-ը փոխել է բուհը: Բուհի փոփոխության պատճառներում գլխավորը դարձյալ կրթության որակն է: Մագիստրատուրան այլ բուհում շարունակած ուսանողները նախընտրել են նախ և առաջ Հայաստանի ամերիկյան, ապա Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանները: Մյուս բուհերն առավել ցածր ցուցանիշ են գրանցել:

Հետաքրքիր է հասկանալ նաև, թե կախված բուհի տեսակից՝ ինչպիսի պատճառներն են գերակշիռ բուհի ընտրության հարցում: Դրա համար խմբավորել ենք բուհերն՝ ըստ իրենց կարգավիճակի, որպեսզի ավելի լավ հասկանանք բուհերի տարբեր խմբերի միջև այս կամ այն ցուցանիշի դրսևորման առանձնահատկությունները: Ըստ այդմ՝ առանձնացվել են բուհերի հետևյալ խմբերը՝

- ✓ Երևանի պետական բուհեր,
- ✓ Մարզային պետական բուհեր,
- ✓ Բուհերի մասնաճյուղեր,
- ✓ ՀՀ-ում գործող պետական մասնակցությամբ բուհեր,
- ✓ Ոչ պետական բուհեր:

Գծապատկեր 3-ում ներկայացված են, ըստ բուհերի յուրաքանչյուր խմբերի, բուհի ընտրության երեք գլխավոր պատճառները:

Գծապատկեր 3.




Հետազոտության արդյունքները վկայում են, որ Երևանի պետական բուհերի ընտրության մեջ գլխավոր պատճառը պայմանավորված է մասնագիտության ընտրությամբ, այլ կերպ ասած՝ տվյալ մասնագիտությամբ կադրեր պատրաստող այլընտրանքային բուհ կա՛մ առհասարակ չկա, կա՛մ որակյալ կադրեր պատրաստում են միայն համապատասխան բուհերում: Մարզային պետական բուհերի և մասնաճյուղերի ընտրության գլխավոր նախապայմանը տարածքային հասանելիությունն է, ընդ որում՝ մյուս պատճառների հետ համեմատած՝ սա բավական մեծ կշիռ ունի, ՀՀ-ում գործող պետական մասնակցությամբ բուհերի պարագայում՝ կրթության որակը, իսկ ոչ պետական բուհերի դեպքում՝ ցածր ուսման վարձը: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ բուհի հեղինակությունը՝ որպես ընտրության երկրորդ կարևոր նախապայման, հանդես է եկել միայն ՀՀ-ում գործող պետական մասնակցությամբ բուհերի կատեգորիայում: Բուհի

կարգավիճակը (պետական և ոչ պետական) բուհի ընտրության գլխավոր երեք պատճառների շարքում դիտարկվել է միայն մարզային պետական բուհերի խմբում: Մյուս ուշագրավ հանգամանքն այն է, որ բուհերի մասնաճյուղերի կատեգորիայում բուհի ընտրության գլխավոր պատճառների մեջ մեծ տոկոսային տարբերություն կա: Գծապատկերից էլ երևում է, որ տարածքային հասանելիությունը 2.5 անգամից ավել կշիռ ունի՝ ի համեմատություն մյուս պատճառների: Այսպիսի տոկոսային տարբերություն բուհի ընտրության պատճառների մեջ դիտարկվում է միայն այս խմբում:


Դիտարկենք ուսանողների մասնագիտությունների բաշխման պատկերը:

Գծապատկեր 4.



Ամենամեծ մասնագիտական խմբերը կազմում են տնտեսագիտական և առողջապահական մասնագիտությունները՝ համապատասխանաբար 19.1% և 17.9% կշիռներով: Մյուս մասնագիտական խմբերը համեմատաբար փոքր կշիռ են կազմում՝ հումանիտար մասնագիտությունները՝ 9.9%, իրավագիտությունը՝ 9.6%, արվեստի մասնագիտությունները՝ 8.1%: Հարկ է նշել, որ մասնագիտական խմբերում ընդհանրացված են նույն ոլորտի մասնագիտությունները, իսկ առանձին ներկայացված են այն մասնագիտությունները, որոնք առանձին մեծ կշիռ ունեն, ինչպես իրավագիտությունը, մանկավարժությունը, զբոսաշրջությունը: Ստորև ներկայացված է մասնագիտության ընտրության պատճառների բաշխվածությունը:

Գծապատկեր 5.



Ինչպես տեսնում ենք գծապատկերում, անձնական հետաքրքրությունն ու նախընտրությունը հանդիսանում է մասնագիտության ընտրության գլխավոր պատճառը՝ 54.9% կշռով: Ուսանողների 19.8%-ը մասնագիտության ընտրության հարցում առաջնորդվել է աշխատանքային հեռանկարներով. այս խմբի ուսանողների համար մասնագիտության ընտրության գլխավոր նախապայմանն արդիական և պահանջված մասնագիտությունն է: Մյուս պատճառներն ավելի փոքր կշիռ ունեն: Հետաքրքիր է, որ ուսանողների 4.2%-ը նշել է, որ մասնագիտության ընտրությունը եղել է պահատահականորեն: Այս խմբում գլխավորապես ներկայացված են այն ուսանողները, որոնք ընդունվել են համապատասխան բաժիններ՝ ըստ հավաքած անցողիկ միավորների: Հետաքրքիր մի դրսևորում ևս. ուսանողների 2.3%-ը նշել է օգտակար լինելու ձգտումը՝ որպես մասնագիտության ընտրության գլխավոր պատճառ, դա դրսևորվում է հատկապես առողջապահական մասնագիտությունների, ապա միջազգային հարաբերությունների և դիվանագիտության դեպքում:

Հաջորդիվ բերված աղյուսակում ներկայացված է ուսանողների դիրքորոշումն իրենց ընտրած բուհին և մասնագիտությանը:

Աղյուսակ 3. Բուհի և մասնագիտության ընտրությունն այլընտրանքի դեպքում:

<i>Այլընտրանքի դեպքում</i>	Տոկոս
<i>Կընդունվեի նույն բուհ նույն մասնագիտությամբ</i>	55.5%
<i>Կընդունվեի նույն բուհ այլ մասնագիտությամբ</i>	8.8%
<i>Կընդունվեի այլ բուհ նույն մասնագիտությամբ</i>	17.7%
<i>Կընդունվեի այլ բուհ այլ մասնագիտությամբ</i>	17.9%
<i>Բուհ չէի ընդունվի</i>	0.2%
<i>Ընդամենը</i>	100%

Ուսանողների կեսից ավելին իրենց ուսումնառության ընթացքում համոզվել է բուհի և մասնագիտության ընտրության մեջ: Նրանց 55.5%-ը նշել է, որ այլընտրանքի դեպքում դարձյալ նույն ընտրությունը կաներ թե՛ բուհի, թե՛ մասնագիտության: Առավել փոքր տոկոսը՝ 8.8%, համոզվել է բուհի, բայց ոչ մասնագիտության ընտրության մեջ: Այլընտրանքի դեպքում այլ մասնագիտություն ընտրող ուսանողների մեծամասնությունը նշել է տնտեսագիտական մասնագիտությունները և իրավագիտությունը՝ որպես այլընտրանք: Ուսանողների 17.7%-ն էլ համոզվել է մասնագիտության, բայց ոչ բուհի ընտրության մեջ: Որպես այլընտրանքային բուհ՝ ուսանողների մեծամասնությունը նշել է Երևանի պետական համալսարանը՝ 32.2%, ուսանողների 13.1%-ն էլ նշել է, որ այլընտրանքի դեպքում կսովորեր արտասահմանյան բուհում: Բուհի փոփոխության գլխավոր պատճառը կրթության որակն է, ինչը, որպես բուհի փոփոխության պատճառ, գրանցել է 36.9% կշիռ, ապա բուհի հեղինակությունն է 19% կշռով: Ուսանողների 17.9%-ն այլընտրանքի դեպքում կընտրեր այլ բուհ և այլ մասնագիտություն: Այս դեպքում էլ որպես այլընտրանքային բուհ հանդես է գալիս նախ և առաջ Երևանի պետական համալսարանը՝ 24.9%, ապա Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը՝ 13.5% կշռով: Որպես այլընտրանքային մասնագիտություն՝ հանդես են գալիս տնտեսագիտական, ապա առողջապահական մասնագիտությունները: Հետաքրքիր է նաև, որ ուսանողների փոքր տոկոսն, այնուամենայնիվ, նշել է, որ բուհ առհասարակ չէր ընդունվի:

Հետազոտության շրջանակներում խնդիր էր առաջադրված ուսումնասիրելու բուհում կրթություն ստանալու շարժառիթներն՝ ըստ նախապես սահմանված դատողությունների, որոնք ուսանողները գնահատում էին 1-7 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը՝ ընդհանրապես համաձայն չեմ, 7-ը՝ լիովին համաձայն եմ (տե՛ս աղյուսակ 4.):

Աղյուսակ 4. Բուհում կրթություն ստանալու շարժառիթները

N	Շարժառիթներ	Գնահատականներ							Ցուցանիշներ		
		1	2	3	4	5	6	7	Me	Q	V
1	Բարձրագույն կրթությունն ինքնադրսևորման միջոց է	79	30	61	89	185	181	409	6	1.5	25%
2	Բարձրագույն կրթություն ստանալն ազատ ժամանակի կազմակերպման ձև է	426	111	83	94	112	91	118	2	2	100 %
3	Բարձրագույն կրթությունն ընդլայնում է աշխատանքի ընտրության հնարավորությունները	12	5	24	44	80	168	702	7	0.5	7%
4	Բուհում կրթություն ստանալը ծանոթների շրջանակի ընդլայնման միջոց է	99	53	93	127	158	158	346	5	1.5	30%
5	Բարձրագույն կրթությունն ընդլայնում է անհատի աշխարհայացքը, նպաստում անձի զարգացմանը	5	3	8	20	54	139	806	7	0	0
6	Բարձրագույն կրթությունը սոցիալապես ապահովված ապագայի երաշխիք է	38	29	58	121	186	207	396	6	1	17%
7	Բուհը կյանքի ուղեկից գտնելու վայր է	313	115	131	139	142	76	115	3	2	67%
8	Ինձ համար կարևորը դիպլոմն է	498	110	84	123	93	47	78	2	1.5	75%
9	Բարձրագույն կրթություն ստանալը սոցիալական կարգավիճակ է	144	74	111	166	201	161	176	5	1.5	30%
10	Բարձրագույն կրթությունն այսօր անհրաժեշտություն է	30	13	38	69	106	184	595	7	0.5	7%
11	Բարձրագույն կրթություն ստանալը ծնողներիս երազանքն էր	163	49	50	111	96	156	408	6	2	33%
12	Բարձրագույն կրթությունը մասնագիտություն ձեռք բերելու միջոց է	15	4	16	43	83	162	712	7	0.5	7%
13	Շրջապատումս բոլորը բարձրագույն կրթություն ունեն, ես էլ որոշեցի հետևել նրանց	591	102	93	85	74	44	46	1	1	100 %

Աղյուսակում առանձնացված են այն շարժառիթները, որոնց գնահատականների բաշխումը, ըստ վիճակագրական ցուցանիշների, համասեռ է (տե՛ս հավելված 1., Վիճակագրական ցուցանիշներ, կետ 3.1-3.4): Այս ցուցանիշները վկայում են, որ այդ դատողությունների շուրջ ուսանողները միակարծիք են: Խոսքը վերաբերում է բուհում կրթություն ստանալու հետևյալ շարժառիթներին՝

3. Բարձրագույն կրթությունն ընդլայնում է աշխատանքի ընտրության հնարավորությունները,

5. Բարձրագույն կրթությունն ընդլայնում է անհատի աշխարհայացքը, նպաստում անձի զարգացմանը,

10. Բարձրագույն կրթությունն այսօր անհրաժեշտություն է,

12. Բարձրագույն կրթությունը մասնագիտություն ձեռք բերելու միջոց է:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ թվարկված շարժառիթները բարձրագույն կրթություն ստանալու գլխավոր գործոններն են, որոնց շուրջ ուսանողները միակարծիք են՝ տալով գլխավորապես լիովին համաձայնության գնահատական:

Բուհում կրթություն ստանալու շարժառիթների հետ կապված առաջադրել էինք վարկած առ այն, որ շարժառիթների բաշխումների միջև տարբերությունները, կախված բուհի տեսակից, նշանակալի չեն: Վարկածը հաստատվեց երկու շարժառիթի համար՝

2. Բարձրագույն կրթություն ստանալն ազատ ժամանակի կազմակերպման ձև է³,


8. Ինձ համար կարևորը դիպլոմն է⁴:

Սա նշանակում է, որ անկախ բուհի տեսակից (Երևանի պետական բուհեր, մարզային բուհեր, բուհերի մասնաճյուղեր, ՀՀ-ում գործող պետական մասնակցությամբ բուհեր և ոչ պետական բուհեր)՝ ուսանողների գնահատականների միջին կարգային արժեքների միջև տարբերությունները նշանակալի չեն, և եթե հաշվի առնենք աղյուսակ 4-ում ներկայացված գնահատականների պատկերն այս շարժառիթների համար, ապա կարող ենք եզրակացնել, որ անկախ այն բանից, թե որ բուհում են սովորում ուսանողները, նրանք համաձայն չեն դիրքորոշումների հետ առ այն, որ բարձրագույն կրթությունն ազատ ժամանակի կազմակերպման ձև է և գլխավորը դիպլոմ ստանալն է: Ինչ վերաբերում է վերոնշյալ չորս շարժառիթներին, որոնց հետ ուսանողները համաձայն են (N 3, 5, 10, 12), դրանցում, կախված բուհի տեսակից, կարգային միջին արժեքների միջև նշանակալի տարբերություն, թերևս, դրսևորվում է միայն Երևանի պետական բուհերի և ոչ պետական բուհերի կատեգորիաների միջև: Այդ շարժառիթների գնահատականների միջին արժեքները կարելի է տեսնել գծապատկեր 6-ում:

³ Տե՛ս հավելված 1, Վիճակագրական ցուցանիշներ, կետ 3.5.:

⁴ Տե՛ս հավելված 1, Վիճակագրական ցուցանիշներ, կետ 3.6.:

Գծապատկեր 6.




Գծապատկերից տեսնում ենք, որ բուհերի երկու խմբերում էլ՝ Երևանի պետական և ոչ պետական, գնահատման ուղղությունը դեպի «լիովին համաձայն եմ» բևեռն է, և դրանց կարգային միջին արժեքների միջև նշանակալի տարբերությունը նշանակում է, որ ոչ պետական բուհերի ուսանողներն առավել բարձր համաձայնություն աստիճան են տվել նշված շարժառիթներին:

Բուհերի վարկանիշային գնահատման բաղադրիչներից մեկը ուսանողների կողմից բուհի ընդհանուր կրթական միջավայրի գնահատումն է՝ ըստ նախապես սահմանված չափանիշների: Գնահատումն իրականացվել է 7 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը՝ ընդհանրապես բավարարված չեմ, 7-ը՝ լիովին բավարարված եմ: Հաջորդիվ ներկայացված գծապատկեր 7-ում տրված է գնահատականների բաշխման պատկերն՝ ըստ յուրաքանչյուր չափանիշի: Գծապատկերում գնահատման դրական բևեռը նշված է կապույտի, իսկ բացասական բևեռը՝ կարմիրի երանգներով:

Ուսանողների կողմից առավել ցածր գնահատականներ են ստացել «Միջազգային մասնագիտական ամսագրերի և գիտական այլ ժողովածուների հասանելիության»՝ 26%, ապա «Բուհի տարածքում ինտերնետի հասանելիության»՝ 25%, և «Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածության»՝ 23%, կատեգորիաները, ընդ որում՝ «Բուհի տարածքում ինտերնետի հասանելիությանը» նվազագույն միավոր տվել են ուսանողների 16%-ը,

Գծապատկեր 7.

Բուհի ընդհանուր կրթական միջավայրի գնահատում



իսկ «Միջազգային մասնագիտական ամսագրերի և գիտական այլ ժողովածուների հասանելիությանը»՝ 10%-ը: Հետաքրքիր է, որ «Միջազգային մասնագիտական ամսագրերի և գիտական այլ ժողովածուների հասանելիության» կատեգորիան կորելացվում է «Մասնագիտական գրականության համալրվածության» կատեգորիայի հետ, ընդ որում՝ դրանց միջև առկա է միջին ուժգնության ուղիղ համեմատական երկկողմանի նշանակալի կապ: «Բուհի տարածքում ինտերնետի հասանելիության» կատեգորիան կորելացված է «Համակարգչային և այլ տեխնիկական սարքավորումներով համալրվածության», «Բուհի կայքի ինֆորմատիվության» և «Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածության» կատեգորիաների հետ: «Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածության» կատեգորիան ուղիղ համեմատական կապով կորելացվում է «Համակարգչային և այլ տեխնիկական սարքավորումներով համալրվածության», «Բուհի կայքի ինֆորմատիվության», «Դասապրոցեսի արդյունավետության» և «Ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման» կատեգորիաների հետ: Այսինքն՝ այս կատեգորիաներից յուրաքանչյուրի փոփոխությունը բերում է նույն ուղղությամբ մյուս կատեգորիայի փոփոխությանը (կապի գործակիցները տե՛ս հավելված 1, կետ 1.):

Այս չափանիշների հետ կապված ևս մեկ ուշագրավ հանգամանք. «Միջազգային մասնագիտական ամսագրերի և գիտական այլ ժողովածուների հասանելիությանը» նվազագույն միավոր տված ուսանողների գերակշիռ մասը՝ 46.7%-ը, Երևանի պետական բուհերի ուսանողներն են, մինչդեռ «Բուհի տարածքում ինտերնետի հասանելիության» և «Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածության» չափանիշներով նվազագույն գնահատական տված ուսանողների համապատասխանաբար 45.7% և 40%-ը ոչ պետական բուհերի ուսանողներ են: Բացասական գնահատականների միջին կշռով խմբում ընդգրկվել են հետևյալ չափանիշները՝ «Համակարգչային և այլ տեխնիկական սարքավորումներով համալրվածություն»՝ 18%, «Պրակտիկ հմտություններ»՝ 17%, «Ընդհանուր գիտելիքներ (օտար լեզուներ, ընդհանուր համակարգչային հմտություններ)»՝ 15%, «Մասնագիտական գրականության համալրվածություն» և «Ուսումնական պրակտիկաների արդյունավետություն» չափանիշները 14%-ական կշռով, և «Բուհի կայքի ինֆորմատիվություն»՝ 13% կշռով:

Գծապատկերից կարելի է տեսնել, որ գնահատականների ընդհանուր ուղղվածությունը դեպի դրական բևեռն է: Դրական ամենամեծ կշռով է գնահատվել

«Դասախոսների մասնագիտական պատրաստվածության» կատեգորիան, որում առավելագույն գնահատականը կազմել է 62%, հաջորդը «Մասնագիտական գիտելիքների» կատեգորիան է՝ 57%, ապա «Դասախոսների մանկավարժական պատրաստվածության» կատեգորիան՝ 51% առավելագույն դրական գնահատականներով: «Դասախոսների մասնագիտական պատրաստվածության» կատեգորիան ուժեղ երկկողմանի կապով կորելացված է «Դասապրոցեսի արդյունավետության» և «Դասախոսների մանկավարժական պատրաստվածության» կատեգորիաների հետ: «Մասնագիտական գիտելիքների» կատեգորիան միջին ուժգնության կապով կորելացված է «Կրթական ծրագրերի բովանդակության», «Ստացած գիտելիքների կիրառելիության» և «Դասապրոցեսի արդյունավետության» կատեգորիաների հետ: «Դասախոսների մանկավարժական պատրաստվածության» կատեգորիան ուժեղ երկկողմանի կապով կորելացված է «Դասապրոցեսի արդյունավետության» կատեգորիաների հետ: Այսպիսի կապը նշանակում է, որ մի կատեգորիայի դրական գնահատականները հանգեցնում են մյուսի դրական գնահատականներին և հակառակը (կապի գործակիցները տե՛ս հավելված 1, կետ 1.):

Կրթական միջավայրի գնահատման չափանիշների բաշխումների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս չափանիշներից թերևս միայն երեքի շուրջ են ուսանողները միակարծիք: Այդ չափանիշներն են՝ «Մասնագիտական գիտելիքներ»⁵, «Դասախոսների մասնագիտական պատրաստվածություն»⁶, «Դասախոսների մանկավարժական պատրաստվածություն»⁷: Դիտարկելով նաև գնահատման ուղղվածությունը (տե՛ս գծապատկեր 7.)՝ կարող ենք եզրակացնել, որ այս երեք չափանիշների մասով ուսանողները բավարարված են բուհի կրթական միջավայրից:

Այժմ ուսումնասիրենք, թե գնահատման չափանիշներն ինչպիսի դեր են խաղում բուհի կրթական միջավայրի ընդհանուր գնահատումներում: Այդ նպատակով իրականացվել է գործոնային վերլուծություն: Այն հնարավորություն է տալիս մեծ թվով ցուցանիշներից ստանալ փոքր թվով համալիր գործոններ, որոնք նշանակալի ազդեցություն ունեն մեր փոփոխականի վրա, որը տվյալ դեպքում բուհի կրթական

⁵ Տե՛ս հավելված 1, Վիճակագրական ցուցանիշներ, կետ 3.7.:


⁶ Տե՛ս հավելված 1, Վիճակագրական ցուցանիշներ, կետ 3.8.:

⁷ Տե՛ս հավելված 1, Վիճակագրական ցուցանիշներ, կետ 3.9.:

միջավայրն է: Ընդ որում՝ վերլուծության արդյունքում ստացված գործոններն իրենց մեջ միավորում են այնպիսի չափանիշներ, որոնց միջև կա ուժեղ կապ, մինչդեռ տարբեր գործոնների չափանիշների միջև կապը թույլ է: Մենք ունենք 19 չափանիշներ, որոնց այսուհետ կանվանենք բաղադրիչներ: Դրանք վերլուծության արդյունքում կխմբավորվեն համալիր գործոնների մեջ:

Նախ և առաջ նշենք, որ գործոնային վերլուծությունը կիրառելի է մեր ընտրանքի համար, ինչը հիմնավորվում է KMO and Bartlett's թեստի արդյունքներով (գործակիցների արժեքները տե՛ս հավելված 1, աղյուսակ 1.): Գործոնային վերլուծության արդյունքում մեր բաղադրիչներից առանձնացվել են երեք գործոններ, որոնք բացատրում են մեր փոփոխականի բաշխման 59.88%-ը, և ելքային արժեքները մեծ են 1-ից (տե՛ս հավելված 1, աղյուսակ 2.): Ստորև տրված գծապատկերում ներկայացված է բաղադրիչներից յուրաքանչյուրի արժեքը:

Գծապատկեր 8.



Այսպիսով՝ գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որը բուհի ընդհանուր կրթական միջավայրը գնահատվում է երեք գործոնների տեսանկյունից: Դրանք ներառում են հետևյալ բաղադրիչները (բաղադրիչների կապի գործակիցները տե՛ս հավելված 1, աղյուսակ 3.)՝

Գործոն 1. Ուսումնառության արդյունավետություն և արդյունքներ

- ✓ Կրթական ծրագրերի բովանդակություն
- ✓ Ստացած գիտելիքների արդիականություն
- ✓ Ստացած գիտելիքների կիրառելիություն

- ✓ Ընդհանուր գիտելիքներ (օտար լեզուներ, ընդհանուր համակարգչային հմտություններ)
- ✓ Մասնագիտական գիտելիքներ
- ✓ Անձի զարգացմանը նպաստող գիտելիքներ
- ✓ Պրակտիկ հմտություններ
- ✓ Ուսումնական պրակտիկաների արդյունավետություն
- ✓ Ուսանողների հետազոտական կարողությունների զարգացում

Գործոն 2. Նյութատեխնիկական ռեսուրսների համալրվածություն

- ✓ Մասնագիտական գրականության համալրվածություն
- ✓ Միջազգային մասնագիտական ամսագրերի և գիտական այլ ժողովածուների հասանելիություն
- ✓ Համակարգչային և այլ տեխնիկական սարքավորումներով համալրվածություն
- ✓ Բուհի տարածքում ինտերնետի հասանելիություն
- ✓ Բուհի կայքի ինֆորմատիվություն
- ✓ Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածություն

Գործոն 3. Մարդկային ռեսուրսներ


- ✓ Դասապրոցեսի արդյունավետություն
- ✓ Դասախոսների մասնագիտական պատրաստվածություն
- ✓ Դասախոսների մանկավարժական պատրաստվածություն
- ✓ Ուսանողների իրավունքների պաշտպանություն

Ուսանողների գնահատականների վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք բաշխվել են այնպես, որ առաջին գործոնի բաղադրիչներն ուղղված են ուսումնառության բովանդակային կողմի և վերջնարդյունքների գնահատմանը, երկրորդ գործոնինը՝ բուհի նյութատեխնիկական ռեսուրսների համալրվածությունը, իսկ երրորդը վերաբերում է կրթական գործընթացի սուբյեկտներին՝ ուսանողներ և դասախոսներ: Գնահատման արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ ուսանողները բուհի ընդհանուր կրթական միջավայրը չափում են երեք գործոնների տեսանկյունից՝ ուսումնական գործընթացի արդյունավետության, ինչը կզարգացնի իրենց թե՛ տեսական գիտելիքները,

թե՛ պրակտիկ և հետազոտական հմտությունները, նյութատեխնիկական ռեսուրսների համալրվածության և մարդկային ռեսուրսների տեսանկյունից:

Ուսումնական գործընթացի կազմակերպման գնահատումներում ուսանողները հատկապես բավարարված չեն ուսումնական պրակտիկաների կազմակերպումից: Այս կատեգորիան գրանցել է բացասական գնահատականների ամենամեծ կշիռը՝ 19%, որից 8%-ը բացարձակ բացասական գնահատականներն են: Ուսանողները բավարարված չեն նաև ադմինիստրատիվ աշխատանքների կազմակերպումից՝ 16% բացասական գնահատականների կշիռ: Ինչպես կրթական միջավայրի գնահատումներում, այնպես էլ այստեղ գնահատականների ուղղվածությունը առավելապես դրական է (տե՛ս ստորև ներկայացված գծապատկեր 9.):

Գծապատկեր 9.



Ուսումնասիրելով այս դատողությունների բաշխման վիճակագրական ցուցանիշները՝ պարզ դարձավ, որ ուսանողները միակարծիք են «Դասախոսությունների անցկացման» դատողության շուրջ⁸: Ի տարբերություն մյուս դատողությունների՝ այս դատողության համար, բացի գնահատականների գրանցած տոկոսներից, կարող ենք

⁸ Տե՛ս հավելված 1, Վիճակագրական ցուցանիշներ, կետ 3.10.:

վստահաբար եզրակացնել, որ դասախոսությունների անցկացումից ուսանողները բավարարված են:


Հետազոտության շրջանակներում ուսանողները գնահատել են իրենց բուիը նաև աշխատաշուկայի պահանջների համապատասխանության տեսանկյունից: Գնահատականների բաշխվածությունը ներկայացված է հաջորդիվ տրված գծապատկեր 10-ում: Չափանիշները, որոնք ստացել են առավել բացասական գնահատականներ, հետևյալն են՝

- ✓ Բուի - գործատու համագործակցության ձևավորում՝ 20
- ✓ Պրակտիկ հմտություններ՝ 16%,
- ✓ Ձեռնարկատիրական մտածողության ձևավորում՝ 16%,
- ✓ Հետազոտական կարողությունների ձևավորում՝ 13%:

Հատկանշական է, որ «Հետազոտական կարողությունների ձևավորման» չափանիշը միջին ուժգնության ուղիղ համեմատական կապով կորելացվում է գրեթե բոլոր չափանիշների հետ: «Բուի - գործատու համագործակցության ձևավորման» չափանիշը միջին ուժգնության ուղիղ համեմատական կապով կորելացվում է «Տեսական գիտելիքների կիրառման հմտությունների», «Հետազոտական կարողությունների ձևավորման», «Հաղորդակցման հմտությունների ձևավորման» և «Ձեռնարկատիրական մտածողության ձևավորման» չափանիշների հետ: «Պրակտիկ հմտությունների» չափանիշը դարձյալ միջին ուժգնության կապով կորելացվում է «Տեսական գիտելիքների կիրառման հմտությունների», «Հետազոտական կարողությունների ձևավորման» չափանիշների հետ: Այս չափանիշների միջև առկա ուղիղ համեմատական կապը նշանակում է, որ այս չափանիշները փոխապայմանավորում են միմյանց, և մի չափանիշի այս կամ այն ուղղությամբ գնահատականները բերում են մյուսի համապատասխան գնահատականներին (կոռելյացիայի գործակիցները տե՛ս հավելված 1, կետ 2.):


Գծապատկեր 10.

Բուհի գնահատման՝ աշխատաշուկայի պահանջների համապատասխանության տեսանկյունից



Աշխատաշուկայի պահանջների տեսանկյունից բուհի գնահատականների ուսումնասիրության համար ևս հնարավոր եղավ իրականացնել գործոնային վերլուծություն, ինչը հիմնավորվում է KMO and Bartlett's թեստի արդյունքներով (գործակիցների արժեքները տե՛ս հավելված 1, աղյուսակ 4.): Բաղադրիչների բաշխվածությունը կրում է հետևյալ տեսքը՝

Գծապատկեր 11.



Մեր բաղադրիչները խմբավորվել են երկու գործոններում, որոնք բացատրում են փոփոխականի բաշխման 61.43%-ը (տե՛ս հավելված 1, աղյուսակ 5.): Այդ գործոնները ներառում են հետևյալ բաղադրիչները.

Գործոն 1. Աշխատանքի համար անհրաժեշտ կոնկրետ գիելիքներ և հմտություններ

- ✓ Աշխատանքի համար անհրաժեշտ մասնագիտական տեսական գիտելիքներ
- ✓ Ընդհանուր գիտելիքներ (օտար լեզուներ, ընդհանուր համակարգչային հմտություններ)
- ✓ Պրակտիկ հմտություններ
- ✓ Տեսական գիտելիքների կիրառման հմտություններ
- ✓ Հետազոտական կարողությունների ձևավորում
- ✓ Ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացում
- ✓ Թիմային աշխատանքի հմտությունների զարգացում
- ✓ Բուհ-գործատու համագործակցության ձևավորում


Գործոն 2. Աշխատանքի համար անհրաժեշտ հավելյալ հմտություններ

- ✓ Հաղորդակցման հմտությունների ձևավորում
- ✓ Ձեռնարկատիրական մտածողության ձևավորում
- ✓ Կարգապահություն/ պատասխանատվություն
- ✓ Ստեղծագործականության զարգացում
- ✓ Ժամանակի կառավարում
- ✓ Ինքնաներկայացման հմտություններ
- ✓ Մասնագիտական էթիկայի ձևավորում

Հետաքրքիր է, որ ուսանողների գնահատականները բաշխվում են երկու գործոններում: Բուհն աշխատաշուկայի պահանջների տեսանկյունից գնահատվում է մի կողմից՝ ըստ այն կոնկրետ գիտելիքների և հմտությունների, որոնք անհրաժեշտ են աշխատանքի համար, մյուս կողմից՝ ըստ այն հմտությունների, որոնք ցանկալի են և դիտվում են որպես առավելություն գործատուների կողմից: Հարկ է ուշադրություն դարձնել ևս մեկ հանգամանքի վրա. առաջին գործոնը ցույց է տալիս այն բաղադրիչները, որոնց ուղղված է բուհի ուսումնական գործընթացը, մինչդեռ երկրորդ գործոնն ամփոփում է հավելյալ հմտություններ, որոնք ուսումնական գործընթացի կազմակերպման տեսանկյունից գտնվում են երկրորդային դիրքում: Այլ կերպ ասած՝ եթե առաջին գործոնի բաղադրիչների իրականացման համար կան հստակ մշակված ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր, ապա երկրորդ գործոնի բաղադրիչների իրականացումը գլխավորապես կախված է դասախոսների կողմից դասապրոցեսի կազմակերպման առանձնահատկություններից և ուսանողների ինքնակրթման ձգտումներից:

Այսպիսով՝ ամփոփենք բուհերի գնահատումները երեք ուղղություններով՝ կրթական միջավայրի, ուսումնական գործընթացի կազմակերպման և աշխատաշուկայի պահանջների տեսանկյունից: Գծապատկեր 12-ում ներկայացված են նշված ուղղություններով բուհերի միջին ագրեգացված գնահատականներն՝ ըստ բուհերի տեսակի:

Գծապատկեր 12.



Հետաքրքիր է, որ բոլոր ուղղություններով էլ՝ ի համեմատություն մյուս խմբերի, ամենացածրը Երևանի պետական բուհերի գնահատականներն են, այնուհետև՝ կրթական միջավայրի և աշխատաշուկայի պահանջների տեսանկյունից բուհերի մասնաճյուղերի խմբինը: Գծապատկերից տեսնում ենք, որ ամենաբարձր գնահատականները դրսևորվում են ոչ պետական բուհերի խմբում: Այս տարբերությունները պայմանավորված են ուսանողների սպասումների տարբեր մակարդակներով և այլ սուբյեկտիվ գործոններով: Հետազոտության արդյունքնում պարզվեց, որ խոշոր պետական բուհերի ուսանողներն առավել քննադատաբար են մոտենում իրենց կրթական պայմաններին, ինչն էլ պայմանավորել է գնահատականների այսպիսի պատկերը:

Հետազոտության շրջանակներում խնդիր էինք առաջադրել ուսումնասիրել բուհերում առկա խնդիրները՝ կապված կրթության որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման հետ: Պարզվեց, որ հիմնական խնդիրները կապված են պրակտիկաների պակասի և դրանց արդյունավետ կազմակերպման հետ: Հաջորդիվ գծապատկերում ներկայացված են խնդիրների բաշխումները:

Գծապատկեր 13.




Ինչպես տեսնում ենք գծապատկերից, ուսանողների կողմից նշվել են բուհի կրթության որակի հետ կապված բազում խնդիրներ, ավելին՝ բավական մեծ կշիռ ունի «Այլ» կատեգորիան, որում խմբավորվել են մի շարք խնդիրներ, որոնք առանձին-առանձին շատ փոքր ցուցանիշ են կազմել, սակայն կատեգորիայի կշռից արդեն կարող ենք եզրակացնել, թե որքան բազմազան են դրանք: Գլխավոր խնդիրը բուհերում ուսանողներին տված թերի պրակտիկ հմտություններն են՝ 15.9%: Ուսանողների մեծամասնությունը գտնում է, որ պրակտիկաների կազմակերպումն արդյունավետ չէ, պրակտիկաները քիչ են, և ուսանողներն ունեն ստացած տեսական գիտելիքների կիրառելիության դժվարություններ: Երկրորդ խնդիրը, որը բազմիցս նշվել է ուսանողների կողմից, մասնագիտական, այդ թվում՝ հայալեզու գրականության պակասն է: Ուսանողների 7.2%-ը որևէ խնդիր չի նշել: Իր կարևորությամբ հաջորդ խնդիրը շենքային անբավարար պայմաններն են: Այս

կատեգորիայում ամփոփված են այնպիսի խնդիրներ, ինչպես ջեռուցումը, լսարանների պակասը, բուհական շենքերի անբարեկարգ վիճակը: Բուհերում կան խնդիրներ կապված նաև նյութատեխնիկական բազայի, լաբորատոր, ուսումնական նյութերի համալրվածության հետ, որն ընդգծել են ուսանողների 6.7%-ը:

Հետաքրքիր է հասկանալ, թե ուսումնական գործընթացի հետ կապված վերոնշյալ խնդիրները, կախված բուհի տեսակից, դրսևորման ինչպիսի առանձնահատկություններ ունեն (տե՛ս հաջորդիվ ներկայացված գծապատկեր 14.): Հետաքրքիր է այն փաստը, որ պրակտիկ հմտությունների պակասը գերակա խնդիր է Երևանի պետական բուհերի և ոչ պետական բուհերի պարագայում: Մարզային պետական բուհերում առաջնային է մասնագիտական և հայալեզու գրականության համալրվածությունը, բուհերի մասնաճյուղերում՝ թերի նյութատեխնիկական բազան: Ուշագրավ է ևս մեկ հանգամանք. ՀՀ-ում գործող պետական մասնակցությամբ բուհերի ուսանողների մեծամասնությունը նշել է, որ խնդիրներ չի տեսնում ուսումնական գործընթացում: Առհասարակ «խնդիրներ չկան» կատեգորիան խնդիրների առաջին հնգյակում հանդիպում է այս և ոչ պետական բուհերի խմբում, ընդ որում՝ եթե առաջին դեպքում ուսանողները բարձր էին գնահատում իրենց բուհի կրթության որակը, ապա երկրորդում՝ դա պայմանավորված էր սպասելիքների մակարդակով: Ընդհանուր առմամբ՝ Երևանի և այլ մարզային պետական բուհերում խնդիրները բովանդակային տեսանկյունից բավական մոտ են իրար, չնայած քանակական ցուցանիշներով տարբերվում են: Բուհերի այս խմբերում կան խնդիրների որոշ առանձնահատուկ դրսևորումներ: Թերևս միայն Երևանի և մարզային բուհերի խմբում են քննությունների անցկացման կարգի և գնահատման համակարգի հետ կապված խնդիրներն ընդգրկվել խնդիրների առաջին հնգյակում, իսկ համակարգչային սարքավորումների պակասի և ինտերնետ կապի խնդիրները՝ բուհերի մասնաճյուղերի խնդիրներում: Ադմինիստրատիվ հարցերի և կրթական ծրագրերի փոփոխման անհրաժեշտությունը մեծ կշիռ են գրանցել ՀՀ-ում գործող պետական մասնակցությամբ բուհերում, իսկ շենքային անբավարար պայմանները՝ հատկապես ոչ պետական բուհերի խմբում:


Գծապատկեր 14.

Ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված խնդիրներն՝ ըստ բուհերի տեսակների



Այսպիսով՝ մենք հասկացանք, թե ըստ ուսանողների՝ ինչպիսի խնդիրներ կան բուհերում՝ կապված կրթության որակի և, առհասարակ, ուսումնական գործընթացի կազմակերպման հետ, հասկացանք այդ խնդիրների դրսևորման առանձնահատկությունները բուհերի տարբեր խմբերում: Այժմ ուսումնասիրենք, թե ինչը կնպաստի կրթության որակի բարելավմանը և ինչպես կարելի է լուծել այդ խնդիրները: Ստորև տրված գծապատկերում ներկայացված են այն գործոնները, որոնք, ըստ ուսանողների, կարող են նպաստել կրթության որակի բարելավմանը:

Գծապատկեր 15.



Ըստ հետազոտության արդյունքների՝ գլխավոր գործոնները, որ կբարձրացնեն կրթության որակը, պրակտիկաների շեշտադրումն է և որակյալ դասախոսական անձնակազմի համալրումը: Ուսանողների մեծամասնությունը գտնում է, որ անհրաժեշտ է զարգացնել պրակտիկ հմտությունները, ավելացնել և արդյունավետ կազմակերպել ուսումնական և արտադրական պրակտիկաները, մյուս կողմից էլ՝ անհրաժեշտ է դասախոսական անձնակազմի համալրում որակյալ, երիտասարդ մասնագետներով: Մյուս գործոնները, ինչպես երևում է գծապատկերից, առավել փոքր, բայց կշիռներով իրար մոտ են՝ փոխանակման ծրագրերի ավելացում, դասավանդման մեթոդների արդիականացում, բուհում կարգապահության խստացում:

Հաջորդիվ տրված գծապատկեր 16-ում ներկայացված են կրթության որակի բարելավմանը նպաստող գործոններն՝ ըստ բուհերի տեսակի: Հետաքրքիրն այն է, որ պրակտիկ հմտությունների զարգացումը և որակյալ դասախոսական անձնակազմի համալրումը հանդիսանում են կրթության որակի բարելավման առաջնային գործոններ՝ անկախ բուհի տեսակից: Մի քանի ուշագրավ միջոցառումներ, որոնք ընդգրկվել են կրթության որակի բարելավմանը նպաստող գործոնների առաջին հնգյակում և դրսևորվում են միայն բուհերի առանձին խմբերում: Քննությունների անցկացման կարգի և գնահատման համակարգի բարելավումը դրսևորվում է միայն Երևանի պետական բուհերի կատեգորիայում, հասարակական վերաբերմունքի փոփոխությունը կրթությանը՝ միայն մարզային պետական բուհերի խմբում, Լաբորատոր, ուսումնական նյութերի, տեխնիկական բազայի, համակարգչային տեխնիկայի համալրում, միջազգային բուհական համագործակցության ընդլայնման գործոնը՝ ՀՀ-ում գործող պետական մասնակցությամբ բուհերի խմբում, և կարգապահությունը, հետևողականությունը՝ որպես կրթության որակի բարելավմանը նպաստող գործոն՝ միայն ոչ պետական բուհերի կատեգորիայում:

Գծապատկեր 16.


Կրթության որակի բարելավմանը նպաստող գործոններն՝ ըստ բուհերի տեսակի



Դասախոսների շրջանում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն

ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտությանը մասնակցել է 893 դասախոս: Դասախոսների 64%-ը հարցման պահին հանդիսացել է հիմնական հաստիքային աշխատող պետական, 32%-ը՝ ոչ պետական, և 4%-ը՝ ՀՀ պետական մասնակցությամբ բուհերում: Ստորև բերված գծապատկերում կարելի է տեսնել, թե ինչպիսին է դասախոսների ներկայացվածությունն՝ ըստ բուհերի կլաստերների (յուրաքանչյուր կլաստերում ընդգրկված բուհերի ցանկը տե՛ս հավելված 1-ում.):


Գծապատկեր 1.



Բուհերի ամենամեծ կլաստերն է «երեք կրթական աստիճաններով ու երեք և ավել մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի» կլաստերը, որը կազմել է ամբողջի 37%-ը: Իր մեծությամբ հաջորդ կլաստերը «երեք կրթական աստիճաններում և մինչև երեք ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի» կլաստերն է՝ կազմելով 29%: «Բակալավրական և մագիստրոսական և երեք ու ավել մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի» կլաստերը կազմել է 11%:

Հարցված դասախոսների 61%-ը կազմել են իգական, իսկ 39%-ը՝ արական սեռի ներկայացուցիչները: Հետազոտությանը մասնակցած ամենաերիտասարդ դասախոսը 22 տարեկան է, իսկ ամենատարեցը՝ 90 տարեկան: Պետք է նկատել, որ ՀՀ-ում տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձանց: Սույն հետազոտության շրջանակներում, 63 տարին լրացած դասախոսները կազմել են 23.1%: Այս հանգամանքը արձանագրում է բարձրագույն կրթություն ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկը՝ կադրերի սերնդափոխության դժվարությունը: Եթե համեմատենք այս ցուցանիշը նախորդ տարիների վարկանիշավորման արդյունքների ցուցանիշների հետ, ապա կարող ենք տեսնել այդ միտումը բոլոր տարիների ընթացքում (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2.




2013 թվականի հետազոտության արդյունքների համաձայն՝ հարցված դասախոսների 50%-ը եղել է 47 տարեկանից փոքր, 2014 թ-ին՝ 51 տարեկանից փոքր, իսկ 2015-ին՝ 48 տարեկանից: Այդ տարիներին տարիքային աշխատանքային կենսաթոշակի խմբի՝ 63 և ավելի, կշիռը կազմել է 19.6% և 26.6% համապատասխանաբար 2013 և 2014 թվականներին:

Հետաքրքիր է նկատել, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակի ենթակա դասախոսների խումբը գերակշռում է Երևանում՝ 84.6%, ապա Շիրակի մարզում՝ կազմելով 5.6%: Այս տարիքային խմբի ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունն աշխատում է պետական բուհերում՝ 56%: Չնայած այս հանգամանքին՝ հնարավոր չէ պնդել, որ հենց պետական բուհական համակարգի ներսում է խնդրահարույց սերնդափոխության հարցը:

Դիտարկենք դասախոսների աշխատանքային ստաժի բաշխվածությունը: Ընդհանուր առմամբ հետազոտությանը մասնակցել են տարբեր սերունդների դասախոսներ: Այդպես ամենափոքր դասախոսական ստաժը կազմել է մեկ ամիս, առավել երկարատևը՝ 58 տարի: Հարցված դասախոսների շրջանում առավել տարածված աշխատանքային ստաժը կազմել է 20 տարի:

Գծապատկեր 3.




Ինչպես կարելի է տեսնել գծապատկեր 3-ում, դասախոսական ստաժը նորմալ բաշխված չէ, ավելի կոնկրետ թեքված է դեպի կոորդինատային ուղղու աջ կողմ՝ կենտրոնանալով ավելի մեծ արժեքների շուրջ: Այս հանգամանքը փաստում է, որ հարցված դասախոսների մեջ գերակշռում են երկարատև աշխատանքային ստաժ ունեցող դասախոսները. հարցված դասախոսների 50%-ի ստաժը գերազանցում է 15 տարին: Դիտարկենք, թե ինչպես են բաշխվել աշխատանքային ստաժի կարգային միջին արժեքները բուհերի տարբեր կլաստերներում: Հաջորդիվ ներկայացված գծապատկերում երևում է, որ աշխատանքային ստաժի միջին արժեքը տատանվում է՝ կախված բուհի կլաստերից: Այսպես՝ նվազագույն միջին արժեքը հանդիպում է երրորդ կլաստերի բուհերում և չնայած դրան՝ կազմում է 16.4 տարի, իսկ առավելագույն միջին ստաժը հանդիպում է արվեստի բուհերի կլաստերում՝ կազմելով 22.5 տարի: Դասախոսական ստաժի միջին տարիների տարբերություններն՝ ըստ բուհերի կլաստերների, նշանակալի են⁹:

⁹ Վիճակագրական ցուցանիշների հիմնավորումը տե՛ս հավելված 2.1-ում:


Գծապատկեր 4.

Դասախոսական միջին աշխատանքային ստաժն՝ ըստ բուհերի և աստեղների



Դիտարկենք հարցված դասախոսների գիտական աստիճանի բաշխումը: Ինչպես երևում է ստորև բերված գծապատկերից, հարցվածների գրեթե կեսը՝ 49.5%, չունեն գիտական կոչում, 41.5%-ը ունեն գիտության թեկնածուի աստիճան, և 9%-ը՝ գիտությունների դոկտորի:

Գծապատկեր 5.



Հարցմանը մասնակցած դասախոսների 56.8%-ը կազմել են առանց գիտական կոչման, 31.9%-ը՝ դոցենտի, և 11.3%-ը պրոֆեսորի կոչում ունեցող դասախոսները: Եթե դիտարկենք դասախոսների գիտական կոչումն աշխատանքային ստաժի հետ

փոխկապվածության տեսանկյունից, ապա նկատելի են որոշ վիճակագրական օրինաչափություններ: Հնարավոր է արձանագրել միջին ուժգնության վիճակագրական կապ¹⁰ դասախոսների գիտական կոչման և աշխատանքային ստաժի միջև. այն վարկածը, որ երկարատև ստաժը երաշխավորում է գիտական կոչման բարձրացում, հաստատվում է: Համաձայն «ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի»¹¹ աշխատանքային ստաժը գիտական կոչում շնորհելու չափանիշներից մեկն է: Կախված թեկնածուի գիտական աստիճանից և ակնկալվող գիտական աստիճանից՝ պահանջվող ստաժը կարող է տատանվել 3-20 տարվա միջակայքում:

Դիտարկելով դասախոսների բաշխումն՝ ըստ բուհերի կլաստերների և դասախոսների գիտական աստիճանի, կարելի է արձանագրել մի հետաքրքիր հանգամանք: Այսպես՝ «առանց գիտական աստիճանի» դասախոսները գերակշռում են բոլոր կլաստերներում, և միայն առաջին կլաստերի բուհերում է, որ այդ ցուցանիշը մեծությամբ երկրորդն է, իսկ մեծությամբ առաջինը՝ «գիտությունների թեկնածուի» աստիճանն է: Փաստորեն, միայն առաջին կլաստերի բուհերում են գերակշռում «գիտությունների թեկնածուի» աստիճան ունեցող դասախոսները՝ կազմելով 47.2%՝ ի տարբերություն այլ կլաստերների, որտեղ գերակշռում են «առանց գիտական աստիճանի» դասախոսները:

Աղյուսակ 1. Բուհերի կլաստերների բաշխումն՝ ըստ դասախոսների գիտական աստիճանների

ԲՈՒՀ-ի կլաստերներ	Գիտական աստիճան		
	Առանց գիտական աստիճանի	Գիտությունների թեկնածու	Գիտությունների դոկտոր
Երեք կրթական աստիճաններով և երեք և ավել մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհ	40.8%	47.2%	12%
Երեք կրթական աստիճաններով և մինչև երեք մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհ	48.3%	41.8%	10%
Բակալավրական և մագիստրոսական, երեք և ավել մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհ	55.1%	41.8%	3.1%


¹⁰ Վիճակագրական կապի հիմնավորման ցուցանիշները տե՛ս հավելված 2.2-ում:

¹¹ Տե՛ս «ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ» <http://parg.co/aG> ըստ 18.01.2016:

Բակլավրական և մագիստրոսական և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհ	52.2%	41.1%	6.7%
Միայն բակլավրական մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհ	51.7%	41.4%	6.9%
Արվեստի բուհեր	75.3%	20.2%	4.5%

Դիտարկենք հետազոտությանը մասնակցած դասախոսների մասնագիտական պրոֆիլները: Գծապատկերից երևում է, որ առավել մեծ խումբ են կազմել հումանիտար՝ 16%, տնտեսագիտական՝ 12%, բնագիտական՝ 11%, և արվեստի մասնագիտությունները՝ 11%: Պետք է նկատել, որ վարկանիշավորման շրջանակում արվեստի բուհերն առանձնացվել են որպես առանձին կլաստեր, այդ իսկ պատճառով այդ մասնագիտություններով դասախոսները կազմել են համեմատաբար մեծ տոկոս: Համեմատաբար փոքր տոկոս են կազմել մարմնամարզական մասնագիտությունները ներկայացնող դասախոսները, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ մասնագիտությունները դասավանդող բուհը ՀՀ-ում միայն մեկն է՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական համալսարանը: Տարատեսակ այլ մասնագիտություններ, որոնք կազմել են շատ փոքր կշիռ, խմբավորվել են Այլ կատեգորիայի տակ:

Գծապատկեր 6.



Անդրադառնանք դասախոսների կողմից բուհի ընդհանուր բավարարվածության դիտարկմանը: Դասախոսներին առաջարկվել են մի շարք չափանիշներ, որոնց հիման վրա նրանք պետք է գնահատեին իրենց ընդհանուր բավարարվածությունը բուհից: Չափանիշների գնահատումն իրականացվել է՝ ըստ դասախոսների բավարարվածության աստիճանի 1-7 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես բավարարված չեմ, 7-ը՝ լիովին բավարարված եմ: Հաջորդ՝ գծապատկեր 7-ում երևում է, թե ինչպես են դասախոսները գնահատել բուհն՝ ըստ առաջարկված չափանիշների: Բուհական համակարգում հնարավոր է արձանագրել չափանիշներ, որոնցից դասախոսների բավարարվածությունը բարձր մակարդակի վրա է, և չափանիշներ, որոնցից դասախոսները ընդհանրապես բավարարված չեն: Օրինակ՝ դասախոսների 24%-ն ընդհանրապես բավարարված չէ բուհում դրամաշնորհային ծրագրերի առկայությունից, 20%-ը բավարարված չէ բուհի կողմից կազմակերպվող գործուղումների արդյունավետությունից: Դասախոսների 13%-ն ընդհանրապես բավարարված չէ վերապատրաստման հնարավորություններից: «Բուհում վերապատրաստման հնարավորություններ» չափանիշին ծայրահեղ անբավարար՝ 1 գնահատական, մեծամասամբ տվել են Երևանի պետական և ոչ պետական բուհերի դասախոսները՝ կազմելով 82%: Հետաքրքրական է, որ աշխատավարձից բավարարված չէ դասախոսների միայն 12%-ը, և այս խնդիրը փաստորեն չի հանդիսանում առաջանային կարևորություն ունեցող՝ զբաղեցնելով «ընդհանրապես բավարարված չեմ» գնահատական ստացած չափանիշների 4-րդ տեղը: «Ընդհանրապես բավարարված չեմ» գնահատականն առավել ստացած չափանիշների հնգյակը եզրափակում է «գիտաժողովների և այլ գիտական միջոցառումների մասնակցության հնարավորություն» չափանիշը՝ կազմելով 11%:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ կան չափանիշներ, որոնք բավական բարձր են գնահատվել: Դասախոսների 66%-ը լիովին բավարարված է բուհի կայքի ինֆորմատիվությամբ: Չնայած այդ ցուցանիշին՝ պետք է նկատել, որ այսօր դեռևս գոյություն ունեն բուհեր, որոնք առհասարակ չունեն կայք: Այդ բուհերի թվում են ոչ պետական հետևյալ բուհերը՝ Երևանի «Հայկական բժշկական ինստիտուտ», Երևանի մշակույթի համալսարան, Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան, Երևանի «Մենեջմենթի» համալսարան, Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա, Երևանի «Սուրբ Թերեզայի անվան համալսարան», «Վիկտոր Համբարձումյանի անվան մանկավարժական ինստիտուտ» և Էջմիածնի «Գրիգոր


Լուսավորիչ համալսարան»: Պետք է նկատել, որ որպես կանոն մասնաճյուղերը չունեն առանձին կայքեր, դրանց մասին ամբողջական տեղեկատվությունը ներեկայացված է մայր բուհերի կայքերում: «Բուհում ինտերնետի հասանելիություն» չափանիշից գոհ է դասախոսների 64%-ը: «Ադմինիստրատիվ հարցերի կազմակերպումից» լիովին բավարարված են հարցված դասախոսների 59%-ը, իսկ «առարկայական ծրագրերի ծանրաբեռնվածությունից»՝ 50%-ը: Ընդհանուր բավարարվածության բարձր գնահատականներ են ստացել նաև «դասախոսների իրավունքների պաշտպանվածություն», «համակարգչային տեխնիկայի համալրվածություն», «քննական և գնահատման համակարգերի արդյունավետություն» չափանիշները: Ինչպես են բաշխվել մնացած չափանիշները, կարելի է տեսնել գծապատկեր 7-ում:

Հետաքրքիր է նկատել, որ բուհից բավարարվածության չափանիշներն ուժեղ, ուղիղ համեմատական կապով¹² կորելացվում են միմյանց հետ: Այսպես «մասնագիտական գրականության համալրվածություն» չափանիշի բարձր գնահատականները համապատասխանում են «միջազգային ամսագրերի և այլ գիտական ժողովածուների հասանելիություն» չափանիշի բարձր գնահատականներին: Սա նշանակում է, որ այն դասախոսները, ովքեր բարձր են գնահատել առաջին չափանիշը, հետևաբար ունեն բավարարվածության բարձր աստիճան և բարձր են գնահատել նաև երկրորդը: Նույն կերպ կորելացվում են «բուհի կողմից կազմակերպած գործուղումների արդյունավետություն» և «մասնագիտական վերապատրաստման հնարավորություն», «բուհում ինտերնետի հասանելիություն» և «համակարգչային սարքավորումների հագեցվածություն», «բուհում ինտերնետի հասանելիություն» և «բուհի կայքի ինֆորմատիվություն» չափանիշներն: «Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածություն» և «համակարգչային սարքավորումների հագեցվածություն», «դասախոսի իրավունքների պաշտպանվածություն» և «ադմինիստրատիվ հարցերի կազմակերպում» չափանիշները նույնպես կորելացվում են իրար հետ ուղիղ համեմատական կապով: Այս չափանիշների դեպքում, ինչպես և նախորդների պարագայում, մեկի բարձր գնահատականները պայմանավորում են նաև մյուսի բարձր գնահատականները:

¹² Վիճակագրական ցուցանիշների հիմնավորումը տե՛ս հավելված 2.3

Գծապատկեր 7.

Բուհից ընդհանուր բավարարվածությունն՝ ըստ հետևյալ չափանիշների



Դիտարկենք բուհից բավարարվածությունը նաև՝ ըստ բերված չափանիշների միջինացված գնահատականների: Աղյուսակում կարելի է տեսնել, որ ամենացածր միջին գնահատականները ստացել են «գիտական աշխատանքների հրապարակման հնարավորություն», «աշխատավարձից բավարարվածություն», վերապատրաստման հնարավորություն», «գործուղումների արդյունավետություն» չափանիշները, իսկ առավել բարձր՝ «ադմինիստրատիվ հարցերի կազմակերպում», «բուհի կայքի ինֆորմատիվություն» և «բուհում ինտերնետի հասանելիություն»: Դիտարկելով չափանիշների միջինացված գնահատականները, կարելի է ասել, որ դասախոսները ընդհանուր առմամբ նշված չափանիշներից բավարարված են:

Աղյուսակ 2. Գնահատման չափանիշների միջին գնահատականները:


Չափանիշներ	Միջին գնահատական
<i>Մասնագիտական գրականության համալրվածություն</i>	5.39
<i>Միջազգային գիտական ամսագրերի հասանելիություն</i>	5.00
<i>Գիտաժողովների և այլ գիտ. միջոցառումների մասնակցություն</i>	5.96
<i>Գիտական աշխատանքների հրապարակման հնարավորություն</i>	4.71
<i>Բուհում դրամաշնորհային նախագծերի առկայություն</i>	6.01
<i>Գործուղումների արդյունավետություն</i>	4.09
<i>Վերապատրաստման հնարավորություն</i>	4.29
<i>Առարկայական ծրագրերի ծանրաբեռնվածություն</i>	5.03
<i>Համակարգչային սարքավորումների հագեցվածություն</i>	5.95
<i>Բուհում ինտերնետի հասանելիություն</i>	6.08
<i>Բուհի կայքի ինֆորմատիվություն</i>	6.11
<i>Լաբորատոր նյութերի համալրվածություն</i>	5.3
<i>Գույքի համալրվածություն</i>	5.61
<i>Ադմինիստրատիվ հարցերի կազմակերպում</i>	6.22
<i>Քննությունների և գնահատման համակարգի արդյունավետություն</i>	5.76
<i>Աշխատավարձից բավարարվածություն</i>	4.41
<i>Դասախոսի իրավունքների պաշտպանվածություն</i>	5.68

Դասախոսների բավարարվածությունն ուսումնասիրելու մեկ այլ եղանակ է բավարարվածության հանրագումարային գնահատականները դիտարկելն է: Այդպիսով ստացված գնահատականները պետք է մեկնաբանել 18-126 միջակայքում: Ինչպես երևում է գծապատկերից դասախոսների ընդամենը 1.1%-ի մոտ է գրանցվել բավարարվածության առավելագույն ցուցանիշ՝ 126¹³ միավոր: Բավարարվածության նվազագույն

¹³ Հանրագումարային նվազագույն բավարարվածության գնահատականը կազմում է 18 միավոր՝ առկա է 18 դատողություն, որոնցից նվազագույն գնահատականը, որ կարող է տրվել, 1 միավորն է, ուստի 18*1=18, իսկ բավարարվածության առավելագույն գնահատականը կազմում է 126՝ 18 դատողության համար տրված առավելագույն 7 միավոր:


գնահատականներ հետազոտության ընթացքում չեն գրանցվել, այսինքն՝ չի գտնվել որևէ դասախոս, ով բոլոր չափանիշները կգնահատեր 1 միավորով: Հետաքրքիր է, թե արդյոք գոյություն ունի կապ բուհից բավարարվածության հանրագումարային գնահատականի և բուհի տեսակի միջև: Սա պարզելու համար դիտարկենք բավարարվածության գնահատականների բաշխումն՝ ըստ բուհերի կլաստերների: Ստորև բերված գծապատկերում կարելի է տեսնել, որ բավարարվածության ամենացածր գնահատականը, ինչպես նաև ամենափոքր միջին գնահատականն արվեստի բուհերի կլաստերում է: Բուհի այս կլաստերում դասախոսների բավարարվածության գնահատականների 50%-ը միջին գնահատականից ցածր է: Արվեստի բուհերից հետո բավարարվածության համեմատական ցածր ցուցանիշներ արձանագրվել են առաջին կլաստերի բուհերում, որտեղ բավարարվածության նվազագույն միավորը կազմել է 34, միջին գնահատականը 92, իսկ առավելագույնը՝ 124:

Գծապատկեր 8.



Ստորև բերված գծապատկերը ներկայացնում է յուրաքանչյուր կլաստերից բավարարվածության գնահատականը: Բուհի ընդհանուր բավարարվածության գնահատականն ամենացածրն է արվեստի, այնուհետև՝ առաջին կլաստերի բուհերում, առավել բարձր է՝ չորրորդ կլաստերում՝ կազմելով 5.8 միավոր:

Գծապատկեր 9.



Գնահատականների նման բաշխումն առաջին հայացքից դժվար է բացատրել, չէ որ առաջին կլաստերում ներառված են հիմնականում Երևանի խոշոր պետական բուհերը, բայց, փաստորեն, այդ բուհերի դասախոսները պակաս բավարարված են, քան օրինակ չորրորդ կլաստերի բուհերի դասախոսները, ովքեր հիմնականում հանդիսանում են Երևանի ոչ պետական բուհերի դասախոսներ: Գնահատականների բաշխման նման պատկերը բացատրվում է գնահատողների սուբյեկտիվությամբ: Ոչ պետական բուհերի դասախոսները հակված են ավելի բարձր գնահատել իրենց բուհն՝ ըստ տարբեր չափանիշների, քան ավելի խոշոր բուհերի դասախոսները, ովքեր ավելի քննադատաբար են մոտենում իրենց աշխատանքային պայմաններին:

Դիմելով գործոնային վերլուծության մեթոդին¹⁴ բացահայտենք այն թաքնված չափանիշները, որոնց հիման վրա իրականում գնահատվում է բուհից բավարարվածությունը: Այս վերլուծական մեթոդի միջոցով հնարավոր է դառնում կրճատել ընդհանուր չափանիշների քանակը՝ միավորելով իրար հետ ուժեղ կորելացվող չափանիշներն առանձին գործոնների մեջ: Այս պարագայում հնարավոր է եղել առանձնացնել երեք գործոն՝ «դասախոսների աշխատանքային պայմաններ», «բուհի գիտական միջավայր» և «բուհի ռեսուրսների համալրվածություն»:

1. «Դասախոսների աշխատանքային պայմաններ», որն իր մեջ ներառում հետևյալ բաղադրիչները՝

¹⁴ Գործոնային վերլուծության վիճակագրական հիմնավորման ցուցանիշները տե՛ս հավելված 2.4-ում:

- ✓ Աշխատավարձից բավարարվածություն
- ✓ Դասախոսի իրավունքների պաշտպանվածություն
- ✓ Ադմինիստրատիվ հարցերի կազմակերպում
- ✓ Քննությունների և գնահատման համակարգի արդյունավետություն
- ✓ Առարկայական ծրագրերի ծանրաբեռնվածություն

2. «**Բուհի գիտական միջավայր**» գործոնն իր մեջ ներառում հետևյալ բաղադրիչները՝

- ✓ Միջազգային ամսագրերի և այլ գիտական ժողովածուների հասանելիություն
- ✓ Գիտաժողովների, սեմինարների և այլ գիտական միջոցառումների մասնակցության հնարավորություն
- ✓ Միջազգային գիտաժողովների, սեմինարների և այլ գիտական միջոցառումների մասնակցության հնարավորություն
- ✓ Գիտական աշխատանքների՝ հոդվածների, հետազոտությունների հրատարակման հնարավորություն
- ✓ Բուհում դրամաշնորհային նախագծերի առկայություն
- ✓ Բուհի կողմից կազմակերպած գործուղումների արդյունավետություն
- ✓ Մասնագիտական վերապատրաստման հնարավորություն

3. «**Բուհի ռեսուրսների համալրվածություն**» գործոնն իր մեջ ներառում հետևյալ բաղադրիչները՝

- ✓ Մասնագիտական գրականության համալրվածություն
- ✓ Համակարգչային սարքավորումների հագեցվածություն
- ✓ Բուհում ինտերնետի հասանելիություն
- ✓ Բուհի կայքի ինֆորմատիվություն
- ✓ Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածություն
- ✓ Գույքային պայմաններ


Այսպիսով՝ կարելի է ասել, որ բուհից ընդհանուր բավարարվածության գնահատումը հիմնվում է «դասախոսների աշխատանքային պայմաններ», «բուհի գիտական միջավայր» և «բուհի ռեսուրսների համալրվածության» չափանիշների վրա: Նշված գործոններից ամենամեծ կշիռն ունի «դասախոսների աշխատանքային պայմաններ» գործոնը, որը բացատրում է տվյալ փոփոխականի բաշխման 41.4%-ը: Մյուս երկու գործոնները կշիռով զգալիորեն փոքր են և մեկնաբանում են բաշխման համապատասխանաբար 7.6% և 5.9%-ը:

Անդրադառնանք դասախոսների կողմից մանկավարժական գործունեությամբ զբաղվելու շարժառիթներին: Դրանք բացահայտելու համար դասախոսներին առաջարկվել

են մի շարք դատողություններ, որոնք անհրաժեշտ էր գնահատել՝ ըստ համաձայնության աստիճանի 1-ից 7 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է «ընդհանրապես համաձայն չեմ», իսկ 7-ը՝ «լիովին համաձայն եմ»: Հաջորդիվ բերված գծապատկեր 10-ում կարելի է տեսնել, թե ինչպես են բաշխվել գնահատականներն՝ ըստ յուրաքանչյուր շարժառիթի: Պետք է նկատել, որ միայն մեկ դատողություն՝ «հաճելի է աշխատել երիտասարդների հետ» ընդհանրապես չի ստացել անհամաձայնության ծայրահեղ գնահատական: Գծապատկերում երևում է, որ այս դատողությանը տված բացասական երանգ ունեցող գնահատականները շատ փոքր տոկոս են կազմում: «Համարժեք վարձատրություն» չափանիշին ծայրահեղ անհամաձայնություն է հայտնել հարցված դասախոսների միայն 14%-ը, իսկ լիովին համաձայնություն՝ 17%-ը: Հարցված դասախոսների 49%-ը «մասնագիտական աճի հնարավորություն» դատողությունը՝ որպես մանկավարժական գործունեությամբ զբաղվելու շարժառիթ, գնահատել է լիովին համաձայնության գնահատականով: Հետաքրքիր է նկատել, որ որոշ շարժառիթների միջև առկա է միջին ուժգնության, ուղիղ համեմատական կապ¹⁵: Այսպես այն դասախոսները, ովքեր որպես մանկավարժական գործունեությամբ զբաղվելու շարժառիթ բարձր են գնահատել «բուհի աշխատանքային ծանրաբեռնվածությունը թույլ է տալիս համատեղել մեկ այլ աշխատանք» դատողությունը, նույնչափ բարձր են գնահատել «ճկուն աշխատանքային գրաֆիկ, ոչ լրիվ աշխատանքային օր, երկարատև արձակուրդ» դատողությունը: «Մասնագիտական աճի հնարավորություն» շարժառիթի բարձր գնահատականներին համապատասխանում են նաև «գիտահետազոտական աշխատանքներով զբաղվելու հնարավորություն» շարժառիթների բարձր գնահատականները: «Մասնագիտական աճի հնարավորություն» շարժառիթն ուժեղ կապով կորելացվում է նաև «փորձի փոխանակման ծրագրերին մասնակցելու հնարավորություն» շարժառիթի հետ: Այս շարժառիթները շաղկապվում են իրար նաև տրամաբանության շրջանակում, և վկայում են այն մասին, որ դասախոսների կողմից տրված գնահատականները արտացոլում են դասախոսների իրական շարժառիթները, և չեն հանդիսանում կամայական գնահատականներ:


¹⁵ Վիճակագրական կապի հիմնավորումը տե՛ս հավելված 2.5-ում:

Գծապատկեր 10.



Այժմ դիտարկենք շարժառիթների ընդհանրացված գնահատականները՝ դրական, բացասական և չեզոք բևեռների տեսանկյունից: Ստորև բերված գծապատկերն ավելի պատկերավոր է ներկայացնում ստացված գնահատականների բաշխումը: Դատողության հետ անհամաձայնություն արտահայտող գնահատականները նշված են «-» նշանով: Հստակ երևում է, որ առավել փոքր բացասական գնահատականն ստացել է «հաճելի է աշխատել երիտասարդների հետ» դատողությունը՝ ընդամենը 0.8%, և «դասավանդելն իմ կոչումն» է՝ 3.9%: Անհամաձայնության առավել մեծ հանրագումարային գնահատական տրվել է «իմ մասնագիտությամբ դժվար է գտնել այլընտրանքային աշխատանք»՝ 59.8%, և «համարժեք վարձատրություն»՝ 34.1% դատողություններին:

Գծապատկեր 11.



Դիտարկենք մանկավարժական գործունեությամբ զբաղվելու դասախոսների շարժառիթների միջին գնահատականը: Ստորև ներկայացված աղյուսակում երևում է, որ գնահատականները հիմնականում միջինից բարձր են: Առավել բարձր միջին գնահատական է ստացել «հաճելի է աշխատել երիտասարդների հետ» դատողությունը: Հաշվի առնելով, որ հարցված դասախոսների տարիքը միջինից բարձր է, այս դատողության նման բարձր

գնահատականը շատ տրամաբանական է՝ միջին և բարձր տարիքի դասախոսները նախընտրում են երիտասարդների հետ աշխատանքը: Առավել ցածր միջին գնահատական ստացել է «իմ մասնագիտությամբ դժվար է գտնել այլընտրանքային աշխատանք» դատողությունը, քանի որ վերջինս ստացել էր «ընդհանրապես համաձայն չեմ» պատասխանների առավել մեծ տոկոսը, ինչն էլ ազդել է վերջնական գնահատականի վրա: Պատասխանների նման բաշխումը, ինչպես նաև միջին գնահատականի արժեքը, հուշում է այն մասին, որ այս դրդապատճառի գնահատումը կախված է դասախոսի մասնագիտությունից. որոշ մասնագիտությունների դեպքում, դասախոսները լիովին համաձայնվել են այս դատողության հետ, իսկ որոշ մասնագիտությունների դեպքում՝ ընդհանրապես չեն համաձայնվել: Օրինակ՝ ագրոպարենային մասնագիտություններ ունեցող դասախոսների 55.5%-ը այդ դատողությանը տարբեր աստիճանի համաձայնության գնահատականներ է տվել, բնագիտական մասնագիտություններ ունեցող դասախոսների՝ 43%-ը, և հումանիտար մասնագիտություններ ունեցող դասախոսների՝ 41%-ը: Այդ դատողությանը տարբեր աստիճանի անհամաձայնության գնահատականներ են տրվել տնտեսագիտական մասնագիտություններ ունեցող դասախոսների 76.6%-ը, ինֆորմատիկա և SS մասնագիտություններ ունեցող դասախոսների 68%-ը, առողջապահական մասնագիտությունների՝ 65.6%-ը:

Աղյուսակ 3. Շարժառիթների միջին գնահատականներ

<i>Շարժառիթներ</i>	<i>Միջին գնահատական</i>
<i>Բուհում դասավանդելը սոցիալական կարգավիճակ է</i>	4.95
<i>Իմ մասնագիտությամբ դժվար է գտնել այլընտրանքային աշխատանք</i>	3.12
<i>Դասավանդելն իմ կոչումն է</i>	6.26
<i>Բուհում ես ինձ պաշտպանված եմ զգում որպես աշխատող</i>	5.97
<i>Բուհի աշխատանքային ծանրաբեռնվածությունը թույլ է փալիս համարելով մեկ այլ աշխատանք</i>	5.02
<i>Ճկուն աշխատանքային գրաֆիկ, ոչ լրիվ աշխատանքային օր, երկարատև արձակուրդ</i>	5.28
<i>Գիտահետազոտական աշխատանքներով զբաղվելու հնարավորություն</i>	5.96
<i>Փորձի փոխանակման ծրագրերին մասնակցելու հնարավորություն</i>	5.2
<i>Մասնագիտական աճի հնարավորություն</i>	5.99
<i>Համարժեք վարձատրություն</i>	4.32
<i>Հաճելի է աշխատել երիտասարդների հետ</i>	6.88

Միջին պատասխանների դիտարկման տեսանկյունից կարևոր է արձանագրել այն հանգամանքը, որ ստանդարտ շեղման գործակիցը բոլոր շարժառիթների դեպքում բավական փոքր արժեքներ է ստացել, ինչը խոսում է պատասխանների համասեռության և նմանության մասին: Հարցված դասախոսների շրջանում հետաքրքիր օրինաչափություն է նկատվի. դասախոսների կողմից ընտրված «համարժեք վարձատրություն» շարժառիթի և բուհից բավարարվածության «աշխատավարձից բավարարվածություն» փոփոխականների միջև առկա է ուժեղ ուղիղ համեմատական կապ¹⁶: Սա ենթադրում է, որ որքան բարձր են գնահատում «աշխատավարձից բավարարվածություն» շարժառիթը, որքան մեծ նշանակություն դա ունի դասախոսի համար, այդքան ավելի բարձր է գնահատված նաև բուհից բավարարվածությունն՝ ըստ աշխատավարձից բավարարվածության չափանիշի: Այլ կերպ ասած՝ այն դասախոսները, որոնց համար այս չափանիշը կարևոր դեր է խաղում, ընտրում են այն բուհեր, որոնք առավել բավարարում են իրենց պահանջներին, հետևաբար նրանք ավելի բարձր են գնահատում աշխատավարձից բավարարվածությունը:

Կարելի է արձանագրել միջին ուժգնության ուղիղ համեմատական կապ¹⁷ նաև «դասախոսների իրավունքների պաշտպանվածության» և «բուհում ես ինձ պաշտպանված եմ զգում որպես աշխատակից» շարժառիթի միջև: Համանման եղանակով, այն դասախոսները, ովքեր որպես շարժառիթ բարձր են գնահատում իրենց իրավունքների պաշտպանվածությունը, բարձր են գնահատում նաև բուհից բավարարվածությունն այդ չափանիշի տեսանկյունից:

Բարձրագույն կրթության ոլորտի հիմնախնդիրները բացահայտելու համար հետազոտության մասնակիցներին խնդրել ենք առանձնացնել իրենց կարծիքով ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված 3 առավել կարևոր խնդիրները: Հետաքրքիր է նկատել, որ դասախոսների 5%-ը նշել է՝ «որևէ խնդիր չկա»: Այս տարբերակը կազմել է ամբողջ պատասխանների¹⁸ 8.4%-ը: Առաջնահերթ խնդիրների շարքում են «լաբորատոր նյութերի

¹⁶ Վիճակագրական կապի հիմնավորումը տե՛ս հավելված 2.6-ում:

¹⁷ Վիճակագրական կապի հիմնավորումը տե՛ս հավելված 2.7-ում:

¹⁸ Պետք է նկատել, որ միևնույն դասախոսը հնարավորություն է ունեցել տալ մեկից ավել պատասխաններ, այդ պատճառով պատասխանների հարաբերակցությունը ներկայացված է՝ ըստ պատասխանների թվի, ոչ թե դասախոսների: Հենց այդ պատճառով տոկոսային համագումարը գերազանցում է 100%-ը:

պակասը»՝ 22.2%, և համակարգչային տեխնիկայի պակասը՝ 14%: Այս խնդիրներն առանձնացվել են թե՛ պետական, թե՛ ոչ պետական և պետական մասնակցությամբ բուհերի դասախոսների կողմից: Սա խոսում է այն մասին, որ բարձրագույն կրթության համակարգում համակարգչային և նյութատեխնիկական բազայի համալրվածությունը հանդես է գալիս իբրև համակարգային խնդիր՝ բնորոշ լինելով բոլոր բուհերին: Դատելով հավաքած տոկոսներից՝ դասախոսների տեսանկյունից առավել կարևոր խնդիր է ուսանողների անտարբերությունը, սովորելու ցանկության բացակայությունը, անլուրջ վերաբերմունքը կրթական գործընթացի նկատմամբ: Խնդիրների շարքում առանձնանում է նաև հայալեզու, մասնագիտական գրականության պակասը և քննական ու գնահատման համակարգի արդյունավետությունը՝ կազմելով ամբողջ պատասխանների 10.8%-ը: Հաջորդիվ բերված գծապատկերում պատկերված են նաև այլ խնդիրներ, որոնք նախորդ խնդիրների համեմատ ստացել են ավելի փոքր տոկոսներ: Չնայած այդ հանգամանքին՝ բարձրաձայնված խնդիրները նույնպես արդիական են (տե՛ս գծապատկեր 12.):

Դիտարկենք առավել տարածված խնդիրների զուգորդումները՝ հասկանալու համար գոյություն ունեցող խնդիրների առավել տարածված կոմբինացիաներ: Այսպես՝ «համակարգչային տեխնիկայի պակաս» խնդիրը պատասխանների 75.4%-ի դեպքում զուգորդվել է «լաբորատոր, ուսումնական նյութերի, տեխնիկական բազայի պակաս» խնդրի հետ, «ինտերնետի անհասանելիությունը» 66.7%-ի դեպքում զուգորդվել է «համակարգչային տեխնիկայի պակաս» խնդիր հետ, ինչը շատ տրամաբանական է: «Մասնագիտական, հայալեզու գրականության պակաս» խնդիրը պատասխանների 32.1%-ի դեպքում զուգորդվել է «լաբորատոր, ուսումնական նյութերի, տեխնիկական բազայի պակաս» խնդրի հետ: Այսպիսով՝ խնդիրների առավել տարածված համադրումները հուշում են այն մասին, որ առանձնացված խնդիրները փոխկապակցված են և հիմնականում նույն բնույթի են:

Գծապատկեր 12.

Ուսումնական գործընթացի հետ կապված խնդիրներ



Ընդհանուր առմամբ նշված խնդիրները կարելի է միավորել մի քանի խմբերում՝

1. Խնդիրներ, որոնք վերաբերում են ռեսուրսների սակավությանը

- ✓ Համակարգչային և նյութատեխնիկական բազայի համալրվածություն
- ✓ Բուհական տարածքներում ինտերնետի անհասանելիություն
- ✓ Մասնագիտական հայալեզու գրականության պակաս
- ✓ Գույքային անբավարար պայմաններ
- ✓ Որակյալ դասախոսական անձնակազմի պակաս
- ✓ Լսարանների սակավություն

2. Խնդիրներ, որոնք պայմանավորված են երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակով

- ✓ Ցածր աշխատավարձ
- ✓ Ուսման բարձր վարձ
- ✓ Մասնագիտական աշխատանք գտնելու դժվարություն
- ✓ Սոցիալական անբավարար պայմաններ
- ✓ Շենքային անբավարար պայմաններ և ջեռուցում
- ✓ Պետական աջակցության պակաս

3. Խնդիրներ, որոնք վերաբերում են կրթության բովանդակությանը

- ✓ Կրթության ցածր որակ
- ✓ Կրթական ծրագրերի փոփոխման անհրաժեշտություն
- ✓ Մասնագիտական առարկաների քիչ ժամաքանակ
- ✓ Պրակտիկ հմտությունների պակաս
- ✓ Ինքնուրույն աշխատանքի հմտությունների պակաս
- ✓ Դպրոցական թերի կրթություն
- ✓ Ընդհանուր գրագիտության ցածր մակարդակ
- ✓ Դասավանդման մեթոդների արդիականացում
- ✓ Ընդունելության ցածր շեմ
- ✓ Վերապատրաստումների բացակայություն
- ✓ Գիտական միջոցառումների կազմակերպման պակաս
- ✓ Փոխանակման ծրագրերի բացակայություն
- ✓ Ուսանողների հանդեպ պահանջների ցածր մակարդակ

4. Խնդիրներ, որոնք վերաբերում են հասարակական ընկալումներին

- ✓ Կարգապահության բացակայություն
- ✓ Ուսանողների անտարբերություն
- ✓ Գիտելիքի արժեզրկում
- ✓ Տեղեկացվածության ցածր մակարդակ

5. Ընդհանուր համակարգային խնդիրներ

- ✓ Միջազգային համագործակցության պակաս
- ✓ Բուհ-գործատու համագործակցության պակաս
- ✓ Բուհի ֆինանսական միջոցների սղություն
- ✓ Քննությունների անցկացման կարգը, գնահատման համակարգ անարդյունավետություն
- ✓ Ուսանողների համալրման խնդիր
- ✓ Գերհագեցած կուրսեր
- ✓ Ադմինիստրատիվ խնդիրներ

Դիտարկենք դասախոսների կողմից նշված խնդիրներն՝ ըստ բուհի կարգավիճակի: Հաջորդ գծապատկերում պատկերված է առավել խոշոր խնդիրների եռյակն՝ ըստ պատասխանների թվի, որոնք տարբերվում են մի կլաստերից մյուսը իրենց տեսակով և ստացած կշիռների մեծությամբ: Կարելի է ենթադրել, որ բուհի առանձնահատկությունները նպաստում են որոշ տեսակի խնդիրների առաջացմանը: Այսպես՝ պետական բուհերի դեպքում առավել մեծ կշիռ ունեցող խնդիրների եռյակն են կազմել՝ «լաբորատոր նյութերի և տեխնիկական բազայի պակասը»՝ 29.3%, «համակարգչային տեխնիկայի պակասը»՝ 16.7%, և «քննությունների անցկացման կարգի և գնահատման համակարգի անարդյունավետությունը»՝ 16.7%: Ոչ պետական բուհերի համար առաջնային խնդիրները բնույթով այլ տիպի են: Դրանց շարքում են «ուսանողների անտարբերությունը»՝ 12.1%, «դիմորդների համալրումը»՝ 11.3%, ինչպես նաև «լաբորատոր նյութերի և տեխնիկական բազայի պակասը»՝ 10.9%: Միջպետական բուհերի դեպքում առավել մեծ կշիռ ունեցող խնդիրներն են «քննությունների անցկացման կարգի և գնահատման համակարգի անարդյունավետություն» և «լաբորատոր նյութերի և տեխնիկական բազայի պակասը», որոնք ստացել են հավասար՝ 12.9%: Միջպետական բուհերի համար նաև առաջնահերթ խնդիր է դիտարկվել «մասնագիտական, հայալեզու գրականություն պակասը»՝ 9.7%: Բուհերի մասնաճյուղերի դեպքում ամենամեծ կշիռն ստացել է «լաբորատոր նյութերի և տեխնիկական բազայի պակասի» խնդիրը՝ 28%, ապա «շենքային անբավարար պայմանները և ջեռուցման խնդիրը»՝ 16%, և «ուսանողների անտարբերությունը»՝ 14%: Մարզային բուհերի դեպքում առավել մեծ կշիռ ստացած խնդիրների եռյակը կազմել են «լաբորատոր նյութերի և տեխնիկական բազայի

պակաս»՝ 21.2%, «համակարգչային տեխնիկայի պակասը»՝ 17.2% և «մասնագիտական, հայալեզու գրականության պակասը»՝ 13.1%, (տե՛ս գծպատկեր 13.):

Գծպատկեր 13.



Սույն հետազոտության շրջանակներում փորձ է արվել ոչ միայն վերհանել դասախոսների տեսանկյունից ներկայիս բարձրագույն կրթության ոլորտում առկա տարբեր խնդիրները, այլ նաև դրանց լուծման միջոցները՝ կրթության որակի բարելավման նպատակով: Կրթության որակի բարելավման տարբեր առաջարկներ են հնչել՝ դրանք հնարավոր է պայմանականորեն բաժանել մի քանի խմբերի:

1. Սոցիալական միջոցառումների ձեռնարկում

- ✓ Սոցիալական վիճակի բարելավում
- ✓ Աշխատավարձի բարձրացում
- ✓ Ուսման վարձի կրճատում
- ✓ Կրթաթոշակների ավելացում
- ✓ Մոտիվացում
- ✓ Բուհին ֆինանսական աջակցություն

2. Համակարգային փոփոխությունների իրականացում

- ✓ Հասարակական վերաբերմունքի փոփոխություն
- ✓ Ընդհանուր գրագիտության բարձրացում
- ✓ Դպրոցական կրթության բարելավում
- ✓ Ընդունելության շեմի բարձրացում
- ✓ Քննությունների կարգի, գնահատման համակարգի բարելավում
- ✓ Բուհ-գործատու համագործակցության ընդլայնում
- ✓ Միջբուհական համագործակցություն
- ✓ Ազատ մրցակցային դաշտի ստեղծում ոչ պետական բուհերի համար
- ✓ Կոռուպցիայի վերացում
- ✓ Ադմինիստրատիվ աշխատանքների բարելավում

3. Նյութատեխնիկական համալրվածության ապահովում

- ✓ Լաբորատոր և ուսումնական նյութերի համալրում
- ✓ Համակարգչային տեխնիկայի համալրում
- ✓ Մասնագիտական, հայալեզու գրականության համալրում
- ✓ Գույքային և շենքային պայմանների բարելավում

4. Կրթության բովանդակության բարելավում

- ✓ Որակյալ դասախոսական կադրերի համալրում
- ✓ Դասախոսների վերապատրաստում
- ✓ Դասավանդման մեթոդների արդիականացում
- ✓ Պրակտիկաների ավելացում
- ✓ Կրթական ծրագրերի փոփոխություն
- ✓ Փոխանակման ծրագրերի ավելացում
- ✓ Կարգապահություն և հետևողականություն
- ✓ Գիտաժողովների և այլ գիտական միջոցառումներ կազմակերպում

Դասախոսների կողմից առաջարկվող կրթության որակի բարելավման միջոցներից՝ ըստ պատասխանների բաշխվածության, առավել մեծ տոկոսներ են ստացել «սոցիալական

վիճակի բարելավում»՝ 17%, «մոտիվացում»՝ 11.3%, «լաբորատոր և ուսումնական նյութերի համալրում»՝ 10.6%, և «դպրոցական կրթության բարելավում»՝ 10.6%, տարբերակները: Այս գործոններն առաջնային են բարձրագույն կրթության բարելավման տեսանկյունից: Ինչպես են բաշխվել մնացած տոկոսները, կարելի է տեսնել գծապատկեր 14-ում:

Գծապատկեր 14.



Հետաքրքիր է նկատել, որ դասախոսների կողմից առանձնացված խնդիրները և դրանց լուծման միջոցները երկու հարցադրումներում էլ հանդիպում են, սակայն դրանք հիմնականում տարբեր կշիռներ են ստացել: Այդպես, եթե համեմատենք խնդիրների և բարելավման միջոցների հնգյակները, կտեսնենք որ նշված տարբերակներից միայն երկուսն են հանդիպում առավել մեծ տոկոսներ ստացած հնգյակում՝ «լաբորատոր և ուսումնական նյութերի համալրվածությունը» և «հասարակական վերաբերմունքը»՝ խնդիրների հնգյակում այս խնդիրը հանդիպում է իբրև «ուսանողների անտարբերություն»:

Դիտարկենք ուսումնական գործընթացի բարելավման միջոցների եռյակն՝ ըստ բուհերի կարգավիճակի: Հաջորդիվ բերված գծապատկերից երևում է, որ ուսումնական գործընթացի բարելավման համար առաջարկվող միջոցները հիմնականում նույն են՝ ըստ իրենց բովանդակության, բայց տարբեր են՝ ըստ ստացած կշիռների: Հիմնականում բոլոր կլաստերներում որպես ուսումնական գործընթացի բարելավման միջոց առաջարկվել է «սոցիալական վիճակի բարելավումը»: Պատասխանների նման բաշխումը խոսում է այն մասին, որ հասարակության սոցիալական խնդիրները ներթափանցել են նաև կրթության ոլորտ և հանդիսանում են կրթության որակի բարելավման խոչընդոտ: Օրինակ՝ մարզային պետական բուհերի դասախոսների կողմից առաջարկված երեք միջոցներն էլ ունեն զուտ ֆինանսական բնույթ՝ սոցիալական պայմանների բարելավում, բուհի ֆինանսական միջոցների ավելացում և աշխատավարձերի բարձրացում: Բուհերի մասնաճյուղերը, որոնք գտնվում են մարզային քաղաքներում, բացի ֆինանսական խնդիրներից ունեն, նաև կադրային քաղաքականության կարիք, այդ մասին են վկայում «դասախոսների վերապատրաստման» և «փորձի փոխանակման» միջոցների նման բարձր տոկոսները: Միջպետական բուհերում առավել մեծ տոկոսներ ստացած առաջարկը «պրակտիկաների ավելացումն» է, որը կազմել է ամբողջ պատասխանների 25%-ը: Մարզային ոչ պետական բուհերում առանձնանում է մեկ այլ խնդիր, որն ընդհանուր խնդիրների ցանկում՝ իր ստացած փոքր տոկոսների պատճառով տեսանելի չէ: Այդ խնդիրը ազատ «մրցակցային դաշտի ստեղծումն է», կամ այլ կերպ ասած՝ լիովին հավասար պայմանների ստեղծումն է ոչ պետական և պետական բուհերի համար, որոնք այսօր, ըստ ոչ պետական բուհերի դասախոսների, ամբողջովին չեն գործում: Նման հավասար պայմանների ստեղծումը

կնպաստի իրենց բուհերում կրթության որակի բարելավմանը: Թե ինչպես են բաշխվել մնացած պատասխանները, կարելի է տեսնել ստորև բերված գծապատկերում:

Գծապատկեր 15.

Ուսումնական գործընթացի բարելավման միջոցների եռյակն՝ ըստ բուհերի կարգավիճակի



Գործատուների շրջանում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն


ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման շրջանակներում գործատուների հետ իրականացված սոցիոլոգիական հետազոտության մեջ ընդգրկվել են թվով 271 կազմակերպություններ: Կազմակերպությունների բաշխումն՝ ըստ մարզերի, կրում է հետևյալ տեսքը.

Աղյուսակ 1. Կազմակերպությունների բաշխումն՝ ըստ մարզերի:

<i>Մարզ</i>	Տոկոս
<i>Երևան</i>	29.9%
<i>Արմավիրի մարզ</i>	5.9%
<i>Գեղարքունիքի մարզ</i>	8.1%
<i>Լոռու մարզ</i>	8.5%
<i>Կոտայքի մարզ</i>	7.4%
<i>Շիրակի մարզ</i>	9.6%
<i>Սյունիքի մարզ</i>	14%
<i>Վայոց Ձորի մարզ</i>	3%
<i>Տավուշի մարզ</i>	8.5%
ԼՂՀ	5.2%
Ընդամենը	100%


Ինչպես տեսնում ենք աղյուսակից, կազմակերպությունների 29.9%-ն ընդգրկվել է Երևանից, 14%-ը՝ Սյունիքի մարզից, 9.6%-ը՝ Շիրակի, 8.5%-ական՝ Լոռու և Տավուշի մարզերից, 8.1%-ը՝ Գեղարքունիքից: Գործատուների ընտրությունը պայմանավորված է եղել համապատասխան տարածաշրջանում գործող բուհերի առկայությամբ: Մարզային քաղաքների կտրվածքով ամենաշատ կազմակերպություններ ընդգրկվել են Գյումրիից՝ 13.7%, ապա Վանաձորից՝ 12.1%, Հրազդանից՝ 10.5%: Կազմակերպություններն ընդգրկվել են ամենատարբեր ոլորտներից (տե՛ս գծապատկեր 1.):

Գծապատկեր 1.



Ինչպես տեսնում ենք գծապատկերից, կազմակերպությունների 10.7%-ը կրթության ոլորտում գործառնող, 9.2%-ը՝ առողջապահության, 7.4%-ը ֆինանսաբանկային համակարգի կազմակերպություններ են: Հետազոտության շրջանակներում ընդգրկվել են տարբեր մեծության կազմակերպություններ: Դրանց բաշխումն՝ ըստ աշխատակիցների թվի, կարելի է տեսնել ստորև ներկայացված գծապատկերում:


Գծապատկեր 2.



Այսպիսով՝ հետազոտության մեջ ընդգրկվել են տարբեր ոլորտներում գործառնող և տարբեր մեծության կազմակերպություններ: Փոքր կազմակերպությունները՝ մինչև 10 աշխատող ունեցող, կազմել են 32.3%, 11-30 աշխատող ունեցող կազմակերպությունները՝ 26.8%, 31-100 աշխատողով՝ 23%, և խոշոր կազմակերպությունները՝ 101 և ավելի աշխատողով, 17.9%:

Գործատու կազմակերպություններից հարցմանը մասնակցածների 14%-ը կազմել են միջին օղակի աշխատողներ, 35.8%-ը՝ միջին օղակի ղեկավարներ, իսկ 50.2%-ը՝ վերին օղակի ղեկավարներ: Տե՛ս ստորև տրված գծապատկերը:


Գծապատկեր 3.



Հարցմանը մասնակցածների 45%-ը կազմել են արական սեռի ներկայացուցիչները, իսկ 55%՝ իգական: Գործատու կազմակերպությունը հարցման ընթացքում ներկայացնող ամենաերիտասարդ հարցվողը եղել է 18 տարեկան, իսկ ամենատարեցը՝ 73, միջին տարիքը կազմել է 43 տարեկան:


Կազմակերպությունների մեծամասնությունում՝ 46.5%, աշխատակիցների կեսից ավելին ունեն բարձրագույն կրթություն: Այն կազմակերպությունները, որոնց ողջ անձնակազմն ունի բարձրագույն կրթություն, կազմում են 30.3%, իսկ կեսից պակասը՝ 23.2%: Տե՛ս հաջորդիվ ներկայացված գծապատկեր 4.

Գծապատկեր 4.



Հետազոտության ընթացքում փորձեցինք պարզել, թե արդյոք գործատուների համար աշխատանքի դիմող թեկնածուների սովորած բուհը հանդիսանում է աշխատանքի ընդունման նախապայման: Ըստ այդմ՝ ստացանք այսպիսի պատկեր.


Գծապատկեր 5.



Այսպիսով՝ գործատուների մեծամասնությունն անշուշտ տեղեկանում է, թե որ բուհի շրջանավարտ է աշխատանքի դիմողը, սակայն դա չի հանդիսանում աշխատանքի ընդունման նախապայման: Մինչդեռ գործատուների 32.1%-ը ոչ միայն տեղեկանում է, այլ նաև համարում բուհն աշխատանքի ընդունման նախապայմաններից մեկը: Գործատուների միայն 21%-ն է նշել, որ ընդհանրապես հաշվի չի առնում, թե որ բուհում է սովորել աշխատանքի ընդունվողը:

Հաջորդ գծապատկերում ներկայացված է, թե որ բուհերի շրջանավարտներին են նախապատվություն տալիս գործատուները:


Գծապատկեր 6.



Այսպիսով՝ այն գործատուների մեծամասնությունը՝ 50.2%, որոնք տեղեկանում են աշխատանքի դիմող թեկնածուների սովորաժ բուհերի մասին կամ որոնք դա համարում են աշխատանքի ընդունման նախապայմաններից մեկը, նախապատվություն են տալիս ՀՀ պետական բուհերի շրջանավարտներին: Գործատուների 45.5%-ը, թերևս, տեղեկանում է բուհի մասին, բայց, ըստ էության, չի տարբերակում բուհերը: Արտասահմանյան բուհերի շրջանավարտներին նախապատվություն է տալիս գործատուների միայն 2.3%-ը: Գծապատկերում տեսնում ենք ԼՂՀ պետական բուհերի կատեգորիան: Այս բուհերին նախապատվություն են տվել հենց ԼՂՀ-ի գործատուները, ինչը խոսում է սվյալ տարածաշրջանում այս բուհերի նշանակության մասին: Հարկ է նաև նշել, որ ՀՀ ոչ պետական բուհերը՝ որպես առանձին կատեգորիա, գործատուների կողմից չեն նշվել:

Այժմ ուսումնասիրենք, թե աշխատանքի ընդունելիս գործատուները հատկապես ինչպիսի որակների վրա են ուշադրություն դարձնում:


Գծապատկեր 7.



Գործատուների համար գլխավոր որակները նախ և առաջ աշխատանքի ընդունվողի պրակտիկ հմտություններ են և տեսական գիտելիքները՝ համապատասխանաբար 20.4% և 16.8% կշիռներով, ապա փորձառությունը և անձնային որակները՝ 14.6% և 14%: Հատկանշական է, որ տարիքը, սեռը մյուս բնութագրիչներից էապես փոքր են իրենց գրանցած կշռով: Այսինքն՝ դրանք ավելի քիչ գործատուներ են կարևորում:

Հետազոտության շրջանակներում բացահայտեցինք այն բուհերը, որոնց շրջանավարտներն առավել նախընտրելի են գործատուների կողմից: Ստորև գծապատկերում ներկայացված է գործատուների կողմից նախընտրելի բուհերի առաջին հնգյակը:

Գծապատկեր 8.




Ինչպես տեսնում ենք գծապատկերից, գործատուների մեծամասնությունը՝ 20.5%, նախընտրում է Երևանի պետական համալսարանի շրջանավարտներին, ապա Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի՝ 10.6%, որը երկու անգամ զիջում է ԵՊՀ-ին, և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի շրջանավարտներին, որոնց նախապատվություն է տվել գործատուների 9.3%-ը: Ինչպես արդեն վերևում համոզվեցինք (տե՛ս գծապատկեր 6.), գործատուների մի մեծ խումբ բուհերը չի տարբերակում: Այստեղ ևս գործատուների 17.3%-ը նշել է, որ որևէ բուհի առավելություն չի տալիս: Այս կազմակերպությունները հիմնականում արդյունաբերության և առևտրի ոլորտում գործող փոքր և միջին կազմակերպություններն են: Եվս մեկ հատկանշական փաստ. Երևանի պետական համալսարանը նախընտրելի բուհերի շարքում նշել են տարբեր ոլորտներում գործառնող կազմակերպություններ՝ նախ և առաջ կրթություն, ապա ԶԼՄ, ՏՏ, արտադրություն, ֆինանսաբանկային համակարգ, մշակույթ, հանրային ծառայություններ և այլն: Մյուս բուհերի պարագայում գործատուները գլխավորապես ոլորտային են: Այսպես՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը նշել են ամենաշատը ՏՏ, ապա էներգետիկայի և արտադրության ոլորտի կազմակերպությունները, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ գլխավորապես ֆինանսաբանկային ոլորտի:

Ստորև բերված գծապատկերում ներկայացված է փաստացի բուհերի հնգյակը, այսինքն՝ սա այն բուհերի ցանկն է, որոնց շրջանավարտները տվյալ պահին հանդիսացել են գործատուների աշխատակիցներ: Գծապատկեր 9-ից երևում է, որ փաստացի բուհերի ցանկը գլխավորում է ԵՊՀ-ն: Հարցված գործատուների 20%-ը նշել է, որ այդ բուհի շրջանավարտներն իր աշխատակիցներն են: Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանն այս ցանկում երկրորդն է՝ ստանալով 13.6%, ապա Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ 12%: Համեմատաբար փոքր կշիռներ են ստացել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը՝ 7%, և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը՝ 4.6%: Հետաքրքիր է, որ այս ցանկը համապատասխանում է գործատուների կողմից առանձնացված նախընտրելի բուհերի ցանկի հետ, ինչը խոսում է այն մասին, որ գործատուներն իրոք ունեն նախապատվություններ բուհերի հարցում և պրակտիկայում հետևում են դրանց: Հատկանշական է նաև այն փաստը,

որ ՀՀ-ում գործող պետական մասնակցությամբ բուհերը շատ փոքր կշիռ են ստացել՝ կազմելով 2.8%: Դրանք նաև չեն ընդգրվել գործատուների կողմից առանձնացված նախընտրելի բուհերի կատեգորիայում: Սրա հավանական պատճառներից մեկն է այն է, որ այս բուհերի շրջանավարտները հիմնականում աշխատանք փնտրում են միջազգային կազմակերպություններում, ինչի արդյունքում ՀՀ գործատուների շատ փոքր մասն է առնչություն ունենում նրանց հետ:


Գծապատկեր 9.



Հաշվետվության նախորդ բաժիններում ցույց տվեցինք, թե ինչպիսի խնդիրներ են առանձնացնում ուսանողներն ու դասախոսները՝ կապված ուսումնական գործընթացի կազմակերպման հետ: Գործատուներին, ինչպես և դասախոսներին ու ուսանողներին առաջարկվել էր նշել բարձրագույն կրթության ոլորտում առակա 3 առավել կարևոր խնդիր: Վերջիններս ամփոփված են գծապատկեր 10-ում:

Գծապատկեր 10.

Բուհական կրթական համակարգում առկա խնդիրներն՝ ըստ գործատուների




Գծապատկերից երևում է, որ գործատուների կողմից որպես գլխավոր հիմնախնդիր առանձնացվում է պրակտիկաների պակասը: Այս տարբերակը կազմել է ամբողջ պատասխանների գրեթե կեսը՝ 48.6%-ը: Պատասխանների նման բաշխումը խոսում է գործատուների կողմից շրջանավարտների/աշխատակիցների պրակտիկ հմտությունների անբավարար գնահատման մասին: Այս հիմնախնդրից զատ, կարելի է առանձնացնել նաև այլ հիմնախնդիր, որոնք համամետաբար մեծ կշիռներ են ստացել: Դրանց թվում են «թերի տեսական գիտելիքները»՝ 15.1%, «գիտելիքի արժեզրկումը»՝ 14.3%, և «որակյալ

դասխատուական անձնակազմի պակասը»՝ 13.5%: Այսպիսով, եթե ամփոփենք առավել մեծ կշիռներ ստացած հիմնախնդիրները, կարելի է ասել, որ գործատուները բավարարված չեն շրջանավարտների թե՛ կիրառական և թե՛ տեսական գիտելիքներով: Բացի այդ, գործատուներն առանձնացրել են շատ կարևոր հիմնախնդիր՝ գիտելիքի արժեզրկում, որը հանգեցնում է մոտիվացիայի պակասի և ուսման հանդեպ հետաքրքրության անկմանը: Այս խնդիրները բարձրաձայնվել են նաև դասախոսների կողմից: Գործատուների կողմից առանձնացվել է ևս մեկ կարևոր խնդիր՝ «գիտելիքի արդիականացում», վերջինս կազմել է բոլոր պատասխանների 10%-ը: Հետաքրքիր է որ գործատուների կողմից առանձնացված խնդիրները տարբերվում են դասախոսների և ուսանողների կողմից առանձնացված խնդիրներից: Ի տարբերություն վերջիններիս՝ գործատուների կողմից նշված խնդիրներն ավելի շատ առնչվում են աշխատանքային գործընթացի հետ, քան բուն ուսումնական: Այդպես՝ գործատուները որպես խնդիր նշել են «վերլուծական մտածողության բացակայությունը»՝ 5%, «գործնական էթիկայի պակասը և հաղորդակցման հմտությունների բացակայությունը»՝ 3.5%, «ինքնուրույն» և «թիմային աշխատանքների հմտությունների պակասը»՝ համապատասխանաբար 2.7% և 1.2%: Կարևոր է նշել, նաև որ մեծ կշիռներ են ստացել «բուհ-գործատու համագործակցության պակասի»՝ 5.4%, և «գիտելիքի անհամապատասխանությունն աշխատաշուկայի»՝ 5.8%, խնդիրները: Հարցված գործատուների միայն 1.4%-ն է գտնում, որ բարձրագույն կրթության ոլորտում որևէ խնդիր չկա: Այդ պատասխանը կազմել է ամբողջ պատասխանների 2.7%-ը: Հետաքրքիր է, որ գործատուների կողմից առանձնացվել է «կառույցիայի առկայությունը» որպես հիմնախնդիր, թերևս դասախոսների և ուսանողների մոտ այն ընդհանրապես բացակայել է:

Հարցված գործատուների 25%-ը գտնում է, որ իրենց կողմից նշված հիմնախնդիրները լիովին լուծելի են բուհ-գործատու համագործակցության միջոցով: Գործատուների մեծամասնությունը՝ 58%-ը, գտել են, որ նշված խնդիրները միայն մասամբ կլուծվեն համագործակցության շնորհիվ: Մինչդեռ գործատուների 14.4%-ը չի տեսնում բուհ-գործատու համագործակցությունն՝ իբրև բարձրագույն կրթության որակի բարելավման միջոց՝ նշելով, որ այն ընդհանրապես չի նպաստի խնդիրների լուծմանը: Հարցվողների 2.6%-ը դժվարացել է

գնահատել, թե արդյոք գործատուների հետ համագործակցությունը կարող է նպաստել կրթության որակի բարելավմանը:

Գծապատկեր 11.




Հարցվածների 53%-ը նշել որ վերջին երեք տարիների ընթացքում ունեցել է բուհերի հետ համագործակցության փորձ: Գծապատկեր 12-ում պատկերված է այդ համագործակցության բնույթն՝ ըստ հարցվողների թվի: Նշված համագործակցության տեսակներից առավել մեծ կշիռներով առանձնանում են «ուսումնական պրակտիկայի կազմակերպումը»՝ որը կազմել է ամբողջ պատասխանների 74.5%-ը, «գիտաժողովների և այլ գիտական միջոցառումների կազմակերպումը»՝ 22.8%-ը, և «անձնակազմի վերապատրաստումը»՝ կազմելով ամբողջ պատասխանների 15.2%-ը: Համագործակցության այլ տեսակները, որոնք կազմել են համեմատաբար փոքր կշիռներ, ամփոփվել են «Այլ» տարբերակի մեջ:

Գծապատկեր 12.




Ընդհանուր առմամբ արձանագրվել է համագործակցություն 42 տարբեր բուհերի հետ, այդ թվում՝ մարզային, պետական, ոչ պետական և միջպետական: Մարզային բուհերից համագործակցություն իրականացվել է հիմնականում մասնաճյուղերի հետ: Պետական բուհերից գործատուների կողմից առավել շատ համագործակցության դեպքեր արձանագրվել են ԵՊՀ-ի, ՀԱՊՀ-ի, ՀՊՏՀ-ի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հետ: Թե ինչպիսի կշիռներ են ստացել այդ համալսարաններն՝ ըստ գրանցված պատասխանների տոկոսի, կարելի է տեսնել գծապատկեր 13-ում:

Գծապատկեր 13.



Պետք է արձանագրել մի հետաքրքիր փաստ, որ անցյալ տարիների համեմատությամբ՝ համագործակցությունը մարզային բուհերի հետ ավելացել է: Մարզային բուհերից գործատուների կողմից առավել շատ համագործակցության դեպքեր արձանագրվել են Գյումրիի Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, Արցախի պետական համալսարանի և ՀԱՊՀ Գյումրիի մասնաճյուղի հետ: Այն հանգամանքը, որ մարզային գործատուները ավելի ակտիվ են սկսել համագործակցել իրենց տարածաշրջանի բուհերի հետ, վկայում է այդ բուհերի հեղինակության բարձրացման և դրանց կարևորության մասին տվյալ տարածաշրջանի համար (տե՛ս գծապատկեր 14.):

Գծապատկեր 14.



Ամփոփում

Ամփոփենք բուհերի վարկանիշավորման ազգային համակարգի շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Այսպիսով՝ բուհի ընտրության մեջ ուսանողների համար գլխավոր նախապայմանը կրթության որակն է, ապա տվյալ մասնագիտությամբ որակյալ կադրեր պատրաստող այլընտրանքային բուհի բացակայությունը: Հարկ է նշել, որ մասնագիտության ընտրությամբ պայմանավորված բուհի ընտրությունը մի կողմից կապված է համապատասխան մասնագիտությամբ կադրեր պատրաստող այլընտրանքային բուհի բացակայությամբ, մյուս կողմից՝ դիրքորոշմամբ առ այն, որ տվյալ մասնագիտությամբ որակյալ կադրեր միայն տվյալ բուն է պատրաստում: Մարզային բուհերի և մասնաճյուղերի պարագայում բուհի ընտրության կարևոր գործոն է հանդիսանում տարածքային հասանելիությունը, իսկ ոչ պետական բուհերի դեպքում՝ ցածր ուսման վարձերը: Մասնագիտության ընտրության հարցում միանշանակ գլխավոր պայմանն ուսանողների անձնական հետաքրքրություններն են: Քանի որ վարկանիշավորման համակարգը բուհերի վարկանիշային գնահատում է, այլ ոչ թե մասնագիտությունների, մենք պարզեցինք նաև այլընտրանքի դեպքում ուսանողների կողմից նախընտրելի բուհերը: Այդ ցանկը գլխավորում է Երևանի պետական համալսարանը, ապա Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանը և արտասահմանյան բուհերի կատեգորիան:

Հետազոտության արդյունքում բացահայտեցինք ուսանողների՝ բարձրագույն կրթություն ստանալու շարժառիթները: Ըստ այդմ՝ պարզ դարձավ, որ ուսանողները դիտարկում են բարձրագույն կրթությունը՝ որպես իրենց աշխատանքային հեռանկարներն ընդլայնող և միաժամանակ անձի զարգացմանը նպաստող գործող: Հետաքրքիր է նաև ուսանողների այն ընկալումը, որ տնտեսության գործառնության ներկայիս փուլում բարձրագույն կրթությունն անհրաժեշտություն է:

Բուհերի վարկանիշային գնահատման բաղադրիչներից մեկը ուսանողների կողմից բուհի ընդհանուր կրթական միջավայրի գնահատումն է, որի արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ ուսանողները բուհի ընդհանուր կրթական միջավայրը չափում են երեք գործոնների տեսանկյունից՝ ուսումնառության արդյունավետություն և արդյունքներ,

նյութատեխնիկական ռեսուրսների համալրվածություն և մարդկային ռեսուրսներ: Աշխատաշուկայի պահանջների տեսանկյունից բուհի գնահատականների վերլուծության արդյունքում առանձնացվեցին երկու կարևոր գործոններ, որոնցից առաջինն ամփոփում է այն կոնկրետ գիտելիքներն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են աշխատանքի համար, իսկ երկրորդը՝ այն հմտությունները, որոնք ցանկալի են և դիտվում են որպես առավելություն գործատուների կողմից:

Կրթության որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված գլխավոր խնդիրը պրակտիկաների պակասն ու դրանց արդյունավետ կազմակերպումն է: Դա ենթադրում է ինչպես պրակտիկաների ավելացում, արդյունավետության բարձրացում, այնպես էլ ստացած գիտելիքների կիրառելիություն և արդիականություն: Ուսանողների կողմից բազմիցս ընդգծվել են մասնագիտական, այդ թվում և հայալեզու գրականության բացակայությունը, բուհերի շենքային անբավարար պայմանները, մասնավորապես՝ ջեռուցման, լսարանների պակասի խնդիրը, լաբորատոր, ուսումնական նյութերի, տեխնիկական բազայի, համակարգչային սարքավորումների պակասը: Կրթության որակի բարելավմանը նպաստող գործոնների շարքում, բացի թվարկած խնդիրների լուծումներից, հատկապես կարևորվում է որակյալ դասախոսական անձնակազմի և երիտասարդ կադրերի համալրումը, դասավանդման մեթոդների արդիականացումը, փոխանակման ծրագրերի ավելացումը: Թե՛ խնդիրների, թե՛ բարելավման եղանակների մեջ ուսանողները նշում են նաև ուսման վարձերի կրճատումը, կրթության ոլորտի ընդհանուր համակարգային փոփոխությունները՝ կապված քննությունների կարգի, գնահատման համակարգի փոփոխության հետ:

Դասախոսների շրջանում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները ցույց տվեցին դասախոսների տարիքի մեծացման միտում, ինչը վկայում է ՀՀ բարձրագույն կրթության առաջնահերթ խնդիրներից մեկի՝ սերնդափոխության հարցի մասին: Դասախոսների կողմից առանձնացվել են մի շարք առաջնահերթ խնդիրներ, որոնք առնչվում են ուսումնական գործընթացի կազմակերպման հետ: Դրանց եռյակը գլխավորել են լաբորատոր նյութերի, համակարգչային և այլ տեխնիկայի պակասը, ինչպես նաև ուսանողների անտարբերությունը կրթության հանդեպ: Կրթության որակի բարելավմանը

կնպաստի այնպիսի համակարգային խնդիրների լուծումը, ինչպիսիք են ընդհանուր սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը, ուսանողների և դասախոսների մոտիվացումը և բուհերի նյութատեխնիկական բազայի համալրումը:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ դասախոսների բավարարվածություն բուհից միջինից բարձր է գնահատվել: Դասախոսների կողմից առավել բացասական են գնահատվել հետևյալ չափանիշները՝ «վերապատրաստման հնարավորություններ», «գործուղումների արդյունավետություն» և «բուհում դրամաշնորհային ծրագրերի առկայություն» և «աշխատավարձի չափ», իսկ առավել բարձր՝ «ինտերնետի հասանելիություն», «բուհի կայքի ինֆորմատիվություն» և «առարկայական ծրագրերի հազեցվածություն» չափանիշները: Գործոնային վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ բուհից ընդհանուր բավարարվածությունը դասախոսների կողմից գնահատվել է երկու գործոնի՝ աշխատանքային պայմանների և բուհի գիտական միջավայրի միջոցով: Դասախոսների կողմից մանկավարժական գործունեությամբ զբաղվելու շարժառիթներում առավել դրական են գնահատվել «հաճելի է աշխատել երիտասարդների հետ» և «դասավանդելն իմ կոչումն է» շարժառիթները:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ բուհը նշանակալի գործոն է հանդիսանում աշխատանք գտնելու հարցում: Հետազոտության շրջանակներում խնդիր էինք առաջադրել՝ բացահայտել գործատուների համար նախընտրելի բուհերը և այն բուհերը, որոնց շրջանավարտները կամ ուսանողները փաստացի հանդիսանում են վերջիններիս աշխատողները: Ինչպես ուսանողների պարագայում, այնպես էլ գործատուների մոտ, թե՛ նախընտրելի, թե փաստացի բուհը Երևանի պետական համալսարանն է, երկրորդ տեղում՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, երրորդ տեղում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը: Հետաքրքիր է, որ գործատուների համար նախընտրելի և փաստացի բուհերի հնգյակը կազմել են նույն բուհերը, ինչը խոսում է այն մասին, որ գործատուներն ունեն որոշակի նախապատվություններ բուհերի հարցում և պրակտիկայում հետևում են դրանց: Հատկանշական է նաև այն փաստը, որ ՀՀ-ում գործող պետական մասնակցությամբ բուհերը շատ փոքր կշիռ են ստացել ինչպես գործատուների կողմից նախընտրելի բուհերի, այնպես էլ փաստացի բուհերի: Դրա

հավանական պատճառներից մեկն է այն է, որ այս բուհերի շրջանավարտները հիմնականում աշխատանք փնտրում են միջազգային կազմակերպություններում, ինչի արդյունքում ՀՀ գործատուների շատ փոքր մասն է առնչություն ունենում նրանց հետ:

Գործատուները, ինչպես և ուսանողները, բուհական կրթական համակարգում առկա խնդիրներից հատկապես առանձնացնում են պրակտիկ հմտությունների պակասը և առհասարակ որակյալ կադրերի պատրաստման խնդիրը՝ մասնավորապես թերի են ուսանողների ստացած տեսական գիտելիքները, ցածր է նրանց հանդեպ պահանջների մակարդակը, գիտելիքն արժեզրկված է: Գործատուների կողմից նշվում է նաև բուհ-գործատու համագործակցության բացակայությունը, ինչով պայմանավորված է բուհական կրթության անհամապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին, շրջանավարտների մոտ գործնական էթիկայի, հաղորդակցման հմտությունների բացակայությունը, թույլ վերլուծական մտածողությունը:

Այսպիսով՝ բուհերի վարկանիշավորման ազգային համակարգի շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքում բացահայտվեցին՝

- ✓ ուսանողների կողմից բուհի և մասնագիտության ընտրության դրդապատճառները,
- ✓ ուսանողների կողմից նախընտրելի բուհերը,
- ✓ ուսանողների՝ բարձրագույն կրթություն ստանալու շարժառիթները,
- ✓ ուսանողների կողմից բուհի ընդհանուր կրթական միջավայրի, ուսումնական գործընթացի կազմակերպման և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության չափանիշների գնահատումը,
- ✓ ուսանողների կողմից բուհի ընդհանուր կրթական միջավայրի գնահատման գլխավոր գործոնները,
- ✓ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության տեսանկյունից բուհի գնահատման գլխավոր գործոնները,
- ✓ դասախոսների կողմից բուհի ընդհանուր բավարարվածության հիմնական գործոնները,
- ✓ դասախոսների կողմից բուհի ընդհանուր բավարարվածության չափանիշների գնահատումը,

- ✓ դասախոսների մանկավարժական գործունեությամբ զբաղվելու դրդապատճառները,
- ✓ գործատուների համար աշխատանքի ընդունելու նախապայմանները,
- ✓ գործատուների կողմից «նախընտրելի» և «փաստացի» բուիերը,
- ✓ գործատուների կողմից բուիերի հետ համագործակցության ձևերը,
- ✓ բուիական կրթական համակարգում առկա խնդիրներն՝ ըստ ուսանողների, դասախոսների և գործատուների,
- ✓ բուիական կրթական համակարգում առկա խնդիրների լուծման եղանակներն՝ ըստ ուսանողների, դասախոսների և գործատուների:

Ուսանողների շրջանում իրականացված սոցիոլոգիական հետազոտության

Բուհերի կլաստերներ

Կլաստեր 1. Երեք կրթական աստիճաններում և երեք ու ավել մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր և դրանց մասնաճյուղեր՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ,
2. Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան,
3. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
4. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ,
5. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ,
6. Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան,
7. Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա,
8. Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ,
9. Արցախի պետական համալսարան:

Կլաստեր 2. Երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր և դրանց մասնաճյուղեր՝

1. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան,
2. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,
3. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
4. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան,
5. Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ,
6. Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարան,
7. Եվրասիա Միջազգային համալսարան,
8. «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան,
9. Երևանի «Հյուսիսային» համալսարան,
10. Երևանի «ՄՖԲ» ֆինանսական ակադեմիա,
11. Երևանի «Գլաձոր» կառավարման համալսարան,
12. Երևանի «Մանց» համալսարան:

Կլաստեր 3. Բակալավրական ու մագիստրոսական և երեք ու ավել մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր՝

1. Հայաստանի ամերիկյան համալսարան,
2. Գավառի պետական համալսարան,

3. Գյումրիի «Պրոգրես» համալսարան,
4. Գորիսի պետական համալսարան,
5. Մովսես Խորենացու անվան համալսարան,
6. Երևանի Հայբուսակ համալսարան,
7. Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամ,
8. Երևանի «Մեսրոպ Մաշտոցի անվան» համալսարան:

Կլաստեր 4. Բակալավրական և մագիստրոսական և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր՝

1. Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան,
2. «Ազպաթ Վետերան» դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտ,
3. «Մարտիզ» արտաքին տնտեսական կապերի համալսարան,
4. Երևանի գյուղատնտեսական համալսարան,
5. Երևանի «Հայկական բժշկական ինստիտուտ»,
6. Երևանի «Սուրբ Թերեզայի անվան համալսարան»,
7. Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ,
8. Երևանի ավանդական բժշկակության համալսարան,
9. Երևանի «Գալիք» համալսարան,
10. Երևանի «Մենեջմենթի» համալսարան,
11. Հրազդանի հումանիտար ինստիտուտ,

Կլաստեր 5. Միայն բակալավրական մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր

1. «ՅՈՒ ԷՍ Ի ԷԼ» համալսարան
2. Էջմիածնի «Գրիգոր Լուսավորիչ համալսարան»
3. Վարդենիսի «Վիկտոր Համբարձումյանի անվան մանկավարժական ինստիտուտ»
4. Հեռուստատեսության և ռադիոյի ակադեմիա

Կլաստեր 6. Արվեստի բուհեր

1. Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա
2. Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ
3. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
4. Երևանի մշակույթի համալսարան
5. Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա

1. Ուսանողների կողմից բուհի ընդհանուր կրթական միջավայրի գնահատման կատեգորիաների միջև առկա վիճակագրական կապի գործակիցները.

- ✓ «Միջազգային մասնագիտական ամսագրերի և գիտական այլ ժողովածուների հասանելիություն» և «Մասնագիտական գրականության համալրվածություն»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.548, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Բուհի տարածքում ինտերնետի հասանելիություն» և «Համակարգչային և այլ տեխնիկական սարքավորումներով համալրվածություն»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.551, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Բուհի տարածքում ինտերնետի հասանելիություն» և «Բուհի կայքի ինֆորմատիվություն»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.581, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Բուհի տարածքում ինտերնետի հասանելիություն» և «Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածություն»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.524, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածություն» և «Համակարգչային և այլ տեխնիկական սարքավորումներով համալրվածություն»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.532, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածություն» և «Բուհի կայքի ինֆորմատիվություն»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.532, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածություն» և «Դասապրոցեսի արդյունավետություն»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.503, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածություն» և «Ուսանողների հետազոտական կարողությունների զարգացում»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.500, նշանակալիության աստիճանը՝ 0.000:

- ✓ «Դասախոսների մասնագիտական պատրաստվածություն» և «Դասապրոցեսի արդյունավետության»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.658, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Դասախոսների մասնագիտական պատրաստվածություն» և «Դասապրոցեսի արդյունավետության»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.682, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Մասնագիտական գիտելիքներ» և «Կրթական ծրագրերի բովանդակություն»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.548, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Մասնագիտական գիտելիքներ» և «Ստացած գիտելիքների կիրառելիություն»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.516, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Մասնագիտական գիտելիքներ» և «Դասապրոցեսի արդյունավետություն»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.532, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Դասախոսների մանկավարժական պատրաստվածություն» և «Դասապրոցեսի արդյունավետություն»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.626, նշանակալիության աստիճանը՝ 0.000:

2. Ուսանողների կողմից բուհի՝ աշխատաշուկայի պահանջների համապատասխանության տեսանկյունից գնահատման կատեգորիաների միջև առկա վիճակագրական կապի գործակիցները.

- ✓ «Բուհ - գործատու համագործակցության ձևավորում» և «Տեսական գիտելիքների կիրառման հմտություններ»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.546, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Բուհ - գործատու համագործակցության ձևավորում» և «Հետազոտական կարողությունների ձևավորում»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.514, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Բուհ - գործատու համագործակցության ձևավորում» և «Հաղորդակցման հմտությունների ձևավորում»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.607, նշանակալիության աստիճանը՝ 0.000:

- ✓ «Բուռ - գործատու համագործակցության ձևավորում» և «Ձեռնարկատիրական մտածողության ձևավորում»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.542, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Պրակտիկ հմտություններ» և «Տեսական գիտելիքների կիրառման հմտություններ»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.654, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «Պրակտիկ հմտություններ» և «Հետազոտական կարողությունների ձևավորում»՝ Սպիրմենի կապի գործակիցը կազմել է 0.626, նշանակալիության աստիճանը՝ 0.000:

3. Վիճակագրական ցուցանիշներ

- 3.1. Դատողություն N3՝ $Q=0.5$ (միջին կվարտիլային շեղում), $V=7\%$ (վարիացիայի գործակից)
- 3.2. Դատողություն N5՝ $Q=0$ (միջին կվարտիլային շեղում), $V=0$ (վարիացիայի գործակից)
- 3.3. Դատողություն N10՝ $Q=0.5$ (միջին կվարտիլային շեղում), $V=7\%$ (վարիացիայի գործակից)
- 3.4. Դատողություն N12՝ $Q=0.5$ (միջին կվարտիլային շեղում), $V=7\%$ (վարիացիայի գործակից)
- 3.5. Դատողություն N2՝ Կրուսկալ-Ուոլլիսի ցուցանիշի արժեքը՝ 0.564, նշանակալիության մակարդակը՝ 0.05:
- 3.6. Դատողություն N8՝ Կրուսկալ-Ուոլլիսի ցուցանիշի արժեքը՝ 0.263, նշանակալիության մակարդակը՝ 0.05:
- 3.7. «Մասնագիտական գիտելիքներ»՝ Բաշխման ցուցանիշներն այսպիսին են՝ $Q=0.5$, $V=7\%$, $Me=7$:
- 3.8. «Դասախոսների մասնագիտական պատրաստվածություն»՝ Բաշխման ցուցանիշներն այսպիսին են՝ $Q=0.5$, $V=7\%$, $Me=7$:
- 3.9. «Դասախոսների մանկավարժական պատրաստվածություն»՝ Բաշխման ցուցանիշներն այսպիսին են՝ $Q=0.5$, $V=7\%$, $Me=7$:

3.10. «Դասախոսությունների անցկացում»՝ Բաշխման ցուցանիշներն այսպիսին են՝ $Q=0.5$,
 $V=7\%$, $Me=7$:

Աղյուսակ 1.

KMO and Bartlett's Test		
Kaiser-Meyer-Olkin Measure of Sampling Adequacy.		0.946
Bartlett's Test of Sphericity	Approx. Chi-Square	9578.390
	df	171
	Sig.	0.000

Աղյուսակ 2.

Total Variance Explained						
Component	Initial Eigenvalues			Extraction Sums of Squared Loadings		
	Total	% of Variance	Cumulative %	Total	% of Variance	Cumulative %
1	8.830	46.474	46.474	8.830	46.474	46.474
2	1.519	7.994	54.468	1.519	7.994	54.468
3	1.028	5.412	59.880	1.028	5.412	59.880
4	0.870	4.579	64.460			
5	0.804	4.233	68.692			
6	0.636	3.349	72.042			
7	0.601	3.165	75.207			
8	0.541	2.850	78.056			
9	0.520	2.739	80.795			
10	0.467	2.460	83.255			
11	0.452	2.378	85.633			
12	0.444	2.334	87.968			
13	0.423	2.228	90.196			
14	0.394	2.076	92.272			
15	0.356	1.876	94.148			
16	0.327	1.721	95.868			
17	0.266	1.400	97.268			
18	0.262	1.378	98.646			
19	0.257	1.354	100.000			

Extraction Method: Principal Component Analysis.

Աղյուսակ 3.

Rotated Component Matrix^a			
	Component		
	1	2	3
Կրթական ծրագրերի բովանդակություն	0.640	0.227	0.418
Ստացած գիտելիքների արդիականություն	0.674	0.219	0.386
Ստացած գիտելիքների կիրառելիություն	0.688	0.149	0.303
Ընդհանուր գիտելիքներ (օտար լեզուներ, ընդհանուր համակարգչային հմտություններ)	0.533	0.344	0.259
Մասնագիտական գիտելիքներ	0.720	0.156	0.163
Անձի զարգացմանը նպաստող գիտելիքներ	0.699	0.149	0.171
Պրակտիկ հմտություններ	0.756	0.261	0.094
Մասնագիտական գրականության համալրվածություն	0.457	0.427	0.255
Միջազգային մասնագիտական ամսագրերի և գիտական այլ ժողովածուների հասանելիություն	0.377	0.564	0.172
Համակարգչային և այլ տեխնիկական սարքավորումներով համալրվածություն	0.215	0.740	0.181
Բուհի տարածքում ինտերնետի հասանելիություն	0.117	0.813	0.098
Բուհի կայքի ինֆորմատիվություն	0.194	0.727	0.162
Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածություն	0.249	0.698	0.237
Դասապրոցեսի արդյունավետություն	0.476	0.266	0.613
Դասախոսների մասնագիտական պատրաստվածություն	0.251	0.134	0.811
Դասախոսների մանկավարժական պատրաստվածություն	0.294	0.187	0.817
Ուսումնական պրակտիկաների արդյունավետություն	0.572	0.319	0.288
Ուսանողների հետազոտական կարողությունների զարգացում	0.488	0.353	0.432
Ուսանողների իրավունքների պաշտպանություն	0.207	0.424	0.580
Extraction Method: Principal Component Analysis.			
Rotation Method: Varimax with Kaiser Normalization.			
a. Rotation converged in 4 iterations.			

Աղյուսակ 4.

KMO and Bartlett's Test		
Kaiser-Meyer-Olkin Measure of Sampling Adequacy.		0.956
Bartlett's Test of Sphericity	Approx. Chi-Square	9092.729
	df	105
	Sig.	0.000

Աղյուսակ 5.

Total Variance Explained						
Component	Initial Eigenvalues			Extraction Sums of Squared Loadings		
	Total	% of Variance	Cumulative %	Total	% of Variance	Cumulative %
1	8.196	54.639	54.639	8.196	54.639	54.639
2	1.019	6.794	61.433	1.019	6.794	61.433
3	0.759	5.058	66.490			
4	0.682	4.548	71.038			
5	0.567	3.778	74.816			
6	0.547	3.648	78.464			
7	0.482	3.212	81.676			
8	0.475	3.164	84.840			
9	0.407	2.716	87.556			
10	0.382	2.549	90.105			
11	0.345	2.297	92.403			
12	0.309	2.059	94.462			
13	0.292	1.944	96.406			
14	0.276	1.838	98.244			
15	0.263	1.756	100.000			

Extraction Method: Principal Component Analysis.

Աղյուսակ 6.

Rotated Component Matrix^a		
	Component	
	1	2
Աշխատանքի համար անհրաժեշտ մասնագիտական տեսական գիտելիքներ	0.716	0.208
Ընդհանուր գիտելիքներ (օտար լեզուներ, ընդհանուր համակարգչային հմտություններ)	0.700	0.253
Պրակտիկ հմտություններ	0.766	0.270
Տեսական գիտելիքների կիրառման հմտություններ	0.746	0.391

Հետազոտական կարողությունների ձևավորում	0.742	0.368
Ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացում	0.619	0.430
Թիմային աշխատանքի հմտությունների զարգացում	0.606	0.404
Բուհ-գործատու համագործակցության ձևավորում	0.571	0.426
Հաղորդակցման հմտությունների ձևավորում	0.538	0.578
Ձեռնարկատիրական մտածողության ձևավորում	0.432	0.584
Կարգապահություն/ պատասխանատվություն	0.201	0.774
Ստեղծագործականության զարգացում	0.386	0.690
Ժամանակի կառավարում	0.305	0.787
Ինքնաներկայացման հմտություններ	0.368	0.738
Մասնագիտական էթիկայի ձևավորում	0.324	0.729
Extraction Method: Principal Component Analysis. Rotation Method: Varimax with Kaiser Normalization.		
a. Rotation converged in 3 iterations.		

Հավելված 2.

Դասախոսների շրջանում իրականացված սոցիոլոգիական հետազոտության

2.1 Դասախոսական ստաժի միջինների տարբերություններն՝ ըստ բուհերի կլաստերների, հիմնավորվում են ոչ պարամետրական թեստի արդյունքում, Կրուսկալ-Վալիսի գործակցի նշանակալիությամբ՝ 0.02:

2.2 Դասախոսների գիտական կոչման և աշխատանքային ստաժի միջև առկա է միջին ուժգնության, նշանակալի վիճակագրական կապ: Սպիրմենի կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.578, նշանակալիության աստիճանը՝ 0.000:

2.3 Դասախոսների բավարավածության մի շարք չափանիշների միջև առկա է միջին և ուժեղ ուղիղ համեմատական, նշանակալի վիճակագրական կապ: Այդ չափանիշներն են՝

- ✓ «մասնագիտական գրականության համալրվածություն» և «միջազգային ամսագրերի և այլ գիտական ժողովածուների հասանելիություն», Սպիրմենի կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.587, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «բուհի կողմից կազմակերպած գործուղումների արդյունավետություն» և «մասնագիտական վերապատրաստման հնարավորություն», Սպիրմենի կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.553, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «բուհում ինտերնետի հասանելիություն» և «համակարգչային սարքավորումների հագեցվածություն», Սպիրմենի կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.600, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «բուհում ինտերնետի հասանելիություն» և «բուհի կայքի ինֆորմատիվություն», Սպիրմենի կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.518, նշանակալիության աստիճանը՝ 0.000:

- ✓ «Լաբորատոր նյութերի/ տեխնիկական բազայի համալրվածություն» և «համակարգչային սարքավորումների հագեցվածություն», Սպիրմենի կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.575, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «դասախոսի իրավունքների պաշտպանվածություն» և «ադմինիստրատիվ հարցերի կազմակերպում», Սպիրմենի կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.571, նշանակալիության աստիճանը՝ 0.000:

2.4 Ստորև բերված աղյուսակում բերված է գործոնային վերլուծության կիրառելիության վիճակագրական հիմնավորումը: Աղյուսակը ներկայացնում է KMO թեստի արդյունքը՝ 0.927, և Bartlett's Test-ի նշանակալիությունը: Հետևաբար, գործոնային վերլուծությունը կարող է կիրառվել իբրև վերլուծական մթոդ այս ընտրանքի համար:

Աղյուսակ 1.

KMO and Bartlett's Test		
Kaiser-Meyer-Olkin Measure of Sampling Adequacy		.927
Bartlett's Test of Sphericity	Approx. Chi-Square	5612.757
	df	153
	Sig.	0.000

Ստորև բերված աղյուսակում հստակ երևում է, որ առկա 18 բաղադրիչներից առանձնացվել է երեք գործոն, որոնք բացատրում են ամբողջ վարիացիայի 54.9%-ը, որտեղ Eigenvalue >1 -ից:

Component	Initial Eigenvalues		
	Total	% of Variance	Cumulative %
1	7.455	41.417	41.417
2	1.377	7.652	49.069
3	1.064	5.910	54.979
4	.937	5.205	60.183
5	.875	4.863	65.047
6	.772	4.291	69.338
7	.701	3.895	73.233

8	.674	3.743	76.976
9	.544	3.024	80.000
10	.510	2.836	82.836
11	.500	2.778	85.614
12	.486	2.699	88.313
13	.431	2.397	90.709
14	.374	2.077	92.787
15	.369	2.047	94.834
16	.340	1.888	96.722
17	.314	1.747	98.469
18	.275	1.531	100.000

2.5 Դասախոսների կողմից մանկավարժական գործունեությամբ զբաղվելու շարժառիթներից որոշները միմյանց հետ կորելացվում են:

- ✓ «բուհի աշխատանքային ծանրաբեռնվածությունը թույլ է տալիս համատեղել մեկ այլ աշխատանք» և «ճկուն աշխատանքային գրաֆիկ, ոչ լրիվ աշխատանքային օր, երկարատև արձակուրդ» շարժառիթը: Սպիրմենի կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.525, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «մասնագիտական աճի հնարավորություն» և «գիտահետազոտական աշխատանքներով զբաղվելու հնարավորություն», Սպիրմենի կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.588, նշանակալիության աստիճանը՝ 0.000:
- ✓ «մասնագիտական աճի հնարավորություն» շարժառիթն ուժեղ կապով կորելացվում է նաև «փորձի փոխանակման ծրագրերին մասնակցելու հնարավորություն» շարժառիթի հետ: Սպիրմենի կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.606, նշանակալիության աստիճանը՝ 0.000:

2.6 Դասախոսների կողմից բուհից ընդհանուր բավարարվածությունն՝ ըստ «աշխատավարձի» գնահատելու և մանկավարժական գործունեության ընտրության «համարժեք վարձատրություն» փոփոխականների միջև գոյություն ունի ուժեղ, նշանակալի վիճակագրական կապ: Սպիրմենի կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.822, նշանակալիության աստիճանը՝ 0.000:

2.7 Դասախոսների կողմից բուհից ընդհանուր բավարավածությունն՝ ըստ «դասախոսների իրավունքների պաշտպանվածության» և «բուհում ես ինձ պաշտպանված եմ զգում որպես աշխատակից» շարժառիթ փոփոխականների միջև առկա է միջին ուժգնության, ուղիղ համեմատական վիճակագրական կապ: Սպիրմենի կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.682, նշանակալիության աստիճանը՝ 0.000: